

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ



Բրյուսել, ապրիլի 3

SEC(2008)392

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Խորհրդին և Եվրոպական պառլամենտին ուղղված Հանձնաժողովի հաղորդագրությանը կից

«2007 թվականին Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում»

Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույց

{COM(2008) 164}

{SEC(2008) 391}

{SEC(2008) 393}

{SEC(2008) 394}

{SEC(2008) 395}

{SEC(2008) 396}

{SEC(2008) 397}

{SEC(2008) 398}

{SEC(2008) 399}

{SEC(2008) 400}

{SEC(2008) 401}

{SEC(2008) 402}

{SEC(2008) 403}

1. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Հայաստանը և ԵՄ-ն առաջին անգամ պայմանագրային հարաբերություններ հաստատեցին 1996 թվականին Գործընկերության և համագործակցության համաձայնագրով, որն ուժի մեջ մտավ 1999 թվականից: Սրա հիման վրա 2006 թվականի նոյեմբերին ընդունվեց ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագիրը՝ հնգամյա ժամկետով: Այդ պահից ի վեր, դրա իրականացումն ուղղորդվել և վերահսկվել է գործողությունների իրականացման առաջին տարեկան փաստաթղթի միջոցով, որը 2007 թվականի համար սահմանում է ԵՄ-ի և Հայաստանի միջև փոխհամաձայնեցված գերակայությունների հիման վրա նախանշված առաջնահերթությունների ընդգրկուն շարք՝ դրանց կատարման ժամանակացույցով: Առաջընթացի ընդհանուր գնահատումը իրականացվել է 2007 թվականի վերջին: Ի հավելումն, ԵՄ-Հայաստան Համագործակցության խորհրդի, ԵՄ-Հայաստան Համագործակցության կոմիտեի և Առևտրի ու համապատասխան իրավական հարցերով ԵՄ-Հայաստան ենթակոմիտեի միջոցով ինստիտուցիոնալ համագործակցությունը հնարավորություն է տվել երկու կողմերին էլ առաջ շարժվել և հետևել ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը:

Այս փաստաթուղթը ներկայացնում է 2006 թվականի նոյեմբերից մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման ընդհանուր առաջընթացը, թեև այս ժամանակահատվածից դուրս մնացած զարգացումներն ըստ անհրաժեշտության նույնպես հաշվի են առնվել: Սա չի հանդիսանում Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի ընդհանուր ուսումնասիրություն:

ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում Հայաստանն առաջընթաց է արձանագրել մի շարք կարևոր ոլորտներում՝ չնայած 2007 թվականի մայիսի խորհրդարանական ընտրությունների և Հայաստանի տարբեր նախարարությունների միջև ծագած ներքին համաձայնեցմանն առնչվող խնդիրների հետևանքով առաջացած ուշացումներին: Առաջընթաց է գրանցվել մասնավորապես դատաիրավական բարեփոխումների, ընտրությունների կազմակերպման և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ոլորտներում: 2008 թվականի համար կարևոր նշանակություն կունենա վերջերս ընդունված իրավական ակտերի պատշաճ կիրարկումը: 2008 թվականի նախագահական ընտրությունների անցկացումը, մասնավորապես՝ դրանց հաջորդած արտակարգ դրությունը մտահոգությունների տեղիք տվեց: Իրադարձությունները ցույց տվեցին, որ առկա է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում հետագա բարելավման անհրաժեշտություն՝ չնայած 2007 թվականին ձեռք բերված առաջընթացին: Դեռևս պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեն կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ: Առաջընթաց է գրանցվել մարդու իրավունքների պաշտպանության մասով, սակայն հետագա բարելավման անհրաժեշտություն կա: Հայաստանի վարած քաղաքականությունը մեծ մասամբ համահունչ է եղել Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հռչակագրերին, և Հայաստանն ընդհանուր առմամբ ակտիվ համագործակցում է ԸԱԱՔ-ին առնչվող հարցերի ոլորտում:

Համագործակցելով միջազգային ֆինանսական կառույցների հետ՝ Հայաստանը 2007 թվականին արձանագրել է կայուն մակրոտնտեսական ցուցանիշներ՝ չնայած առևտրային հաշվեկշռի էական դեֆիցիտի պատճառով

առաջացած խնդիրների: 2007 թվականին, շարունակելով նախորդ վեց տարիների ընթացքում արձանագրված միտումը, տնտեսական աճի տեմպն արտահայտվել է երկնիշ ցուցանիշով: Բյուջեի եկամտային մասի պատշաճ մակարդակով ապահովումը և կապիտալ ծախսերի «թերի» կատարումը հանգեցրին բյուջեի նախատեսվածից ցածր դեֆիցիտի: Հայաստանը բարելավել է իր գործարար միջավայրը, թեև բարելավումներն ընթանում են ավելի դանդաղ՝ համեմատած նախորդ տարիների հետ: Ավելի լուրջ քայլեր պետք է ձեռնարկվեն մաքսային վարչարարությունը բարելավելու ուղղությամբ: Չնայած աղքատության կրճատման հարցում 2007 թվականին արձանագրված առաջընթացին՝ այդ և սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատանքները պետք է շարունակվեն:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն

Նպատակները. ամրապնդել ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը երաշխավորող ինստիտուտների կայունությունն ու արդյունավետությունը ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, դատաիրավական բարեփոխումների, քաղաքացիական ծառայության ոլորտում բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով:

Չնայած որոշ ուշացումների՝ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից բխող **օրենսդրական բարեփոխումների փաթեթի իրականացումը**¹ սկսվեց 2007 թվականին: Այն պետք է ավարտվեր 2005 թվականի նոյեմբերին՝ նոր Սահմանադրությունն ընդունելուց երկու տարի անց: Բարեփոխումները նպաստեցին օրենսդրական համակարգի բարելավմանը, մասնավորապես՝ իշխանությունների բաժանմանը (այդ թվում՝ Ազգային ժողովի լիազորությունների ավելացմանն ու բարելավված տեղական ինքնակառավարմանը), դատական իշխանության և մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) անկախությանը և լրատվամիջոցների ազատությանը: Անհրաժեշտ է արդյունավետորեն կիրարկել նոր օրենսդրությունը, և անհրաժեշտ են օրենսդրական լրացուցիչ փոփոխություններ նոր Սահմանադրության պահանջներին համապատասխանելու համար:

Տեղական ինքնակառավարումը² ամրապնդելու ուղղությամբ նախնական քայլեր են ձեռնարկվել 2007 թվականին: 2007 թվականի դեկտեմբերի սկզբին Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունեց «Երևան քաղաքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նախատեսում է քաղաքապետի անուղղակի ընտրություններ: Օրենքի երկրորդ ընթերցումը կկայանա 2008 թվականի գարնանը: Եվրոպայի

¹ Շարունակել **սահմանադրական բարեփոխումների** իրականացումը՝ կարևորելով օրենսդրական փոփոխությունների արդյունավետ կիրարկումը: Ապահովել նորընտիր օրենսդիր մարմնի՝ սահմանադրական բարեփոխումների սկզբունքներին համապատասխան գործելը:

² Շարունակել բարեփոխումների իրականացումը **տեղական ինքնակառավարման** ոլորտում: Ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և դրանում կատարված փոփոխությունների («Բյուջետային համակարգի մասին» և «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքների, ներառյալ՝ Երևան քաղաքի մասին ընդունվելիք օրենքի) համապատասխանությունը Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայում ամրագրված՝ Եվրոպայի խորհրդի սկզբունքներին:

խորհրդի կարծիքով՝ օրենքի որոշ դրույթներ չեն համապատասխանում Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի սկզբունքներին: «Երևան քաղաքի մասին» օրենքի ընդունումից անմիջապես հետո լրացուցիչ փոփոխություններ կկատարվեն «Տեղական ինքնակառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին» և «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքներում:

Քայլեր են ձեռնարկվել միջազգային չափորոշիչներին համապատասխան մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) դերն ամրապնդելու ուղղությամբ: Բարելավվել է ՄԻՊ-ի ինստիտուցիոնալ անձեռնմխելիությունը, մարդու իրավունքների ոտնահարմանն առնչվող դիմումների ուսումնասիրման իրավասությունը, ինչպես նաև օրենսդրական գործընթացներում մասնակցությունը: 2007 թվականի հուլիսին ընդունվեց ՀՀ Նախագահի հրամանագիրը, որի համաձայն մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

Միջազգային դիտորդների եզրակացության համաձայն՝ 2007 թվականի **խորհրդարանական ընտրություններն**³ ընդհանուր առմամբ համապատասխանել են Հայաստանի կողմից ստանձնած ԵԱՀԿ պարտավորություններին, ինչպես նաև ժողովրդավարական ընտրությունների միջազգային այլ չափորոշիչներին: Խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավի ընթացքում քաղաքական մրցակիցների համար լրատվամիջոցների մատչելիությունը գնահատվել է արդար և հավասար: ԵԱՀԿ վերջնական զեկույցում տեղ գտած առաջարկություններում շեշտը դրվել է քարոզարշավի կարգավորման հետագա բարելավման և ձայների հաշվարկման ու ընտրական ցուցակների կազմման գործում ընտրական հանձնաժողովների կողմից աշխատանքների ավելի լավ իրականացման վրա: Հետևաբար, 2007 թվականի փետրվարին փոփոխություններ կատարվեցին Ընտրական օրենսգրքում և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում: Այս փոփոխություններն ուսումնասիրվել են Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ կողմից և գնահատականում նշվել է, որ առաջընթաց է արձանագրվել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Միջազգային ընտրությունների դիտորդական առաքելությունը նախնական ուսումնասիրությունների և եզրակացությունների վերաբերյալ իր հայտարարության մեջ նշեց, որ 2008 թվականի փետրվարի նախագահական ընտրությունները ընդհանուր առմամբ անցել են միջազգային չափորոշիչներին համապատասխան, և իրական փորձեր են արվել վերացնելու նախորդ ընտրությունների ընթացքում նկատված թերությունները: Այնուամենայնիվ, առաքելությունը նշում է, որ հարկավոր է ուշադրություն դարձնել այն խնդիրներին, որոնք կապված են ընտրական գործընթացի հանդեպ հանրության վստահության, պետության և քաղաքական կուսակցությունների գործառույթների հստակ

³ Ուշադրություն դարձնել 2007 թվականի մայիսի **խորհրդարանական ընտրություններից** և 2008 թվականի փետրվարի **նախագահական ընտրություններից** հետո ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունները դիտարկող միջազգային առաքելության կողմից հրապարակված վերջնական զեկույցում արտահայտված մտահոգություններին, հատկապես այն մտահոգություններին, որոնք վերաբերում են ընտրողների վստահությանը, պետական և կուսակցական գործառույթների հստակ տարանջատման բացակայությանը, քաղաքական մրցակիցների համար լրատվամիջոցներից օգտվելու հավասար պայմաններին, ձայների հաշվարկման և ընտրական ցուցակների կազմման ընթացքում ընտրական հանձնաժողովների աշխատանքների առավել արդյունավետ իրականացմանը:

տարանջատման բացակայության, թեկնածուների նկատմամբ ոչ հավասար մոտեցման հետ: Ընդդիմությունը պահանջեց ընտրություններն անվավեր ճանաչել՝ վկայակոչելով օրինազանցություններ և կեղծիքներ և կազմակերպելով ցույցեր՝ իրենց անհամաձայնությունը քարձրածայնելու համար: Ոստիկանության և ցուցարարների միջև ընդհարումներից հետո Երևան քաղաքում հայտարարվեց արտակարգ դրություն՝ 20 օր ժամկետով: Եվրոպական հանձնաժողովը մտահոգություն հայտնեց նման զարգացումների, այդ թվում՝ լրատվամիջոցների հանդեպ կիրառված սահմանափակումների և բազմաթիվ կալանավորումների առնչությամբ: ԵՄ մի քանի հայտարարություններում կոչ էր արվում վերահաստատել քաղաքական պատշաճ երկխոսությունը:

Քաղաքական բազմակարծության⁴ ամրապնդման ուղղությամբ հետագա քայլեր կատարվեցին 2007 թվականին. ՀՀ արդարադատության նախարարությունը հայտարարեց, որ ստեղծվել է կուսակցությունների ֆինանսավորման վերահսկման մարմին՝ այս հարցում մի շարք թերություններ վերհանելուց հետո: 2007 թվականի վերջում համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծերը ներկայացվեցին Եվրոպայի խորհրդի եզրակացությանը:

Լայնածավալ օրենսդրական բարեփոխումներ են իրականացվել **դատաիրավական համակարգում**⁵: 2007 թվականի փետրվարին ՀՀ դատական օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունումը հանգեցրեց 2008 թվականի հունվարից նոր դատական համակարգի ստեղծմանը: Նոր համակարգը (քրեական, քաղաքացիական, վարչական և սնանկության գործերով դատարաններ) ուղեկցվում է նոր դատական համակարգի կառավարման կառույցներով՝ ներառյալ Արդարադատության խորհուրդը, Դատարանների նախագահների խորհուրդը և Դատական կարգադրիչների ծառայությունը: Վճռաբեկ դատարանի դերն ընդլայնվեց: Չանքեր գործադրվեցին նպաստելու դատական համակարգի թափանցիկությանը (դատարանների, ինչպես նաև վճռաբեկ դատարանի բոլոր որոշումները պետք է հրապարակվեն պաշտոնական կայքէջերում): 2007 թվականի փետրվարին ընդունվեց օրենք, որի նպատակն էր բարեփոխել դատախազության համակարգը և որը, մասնավորապես, քրեական գործերով նախաքննություն իրականացնելու լիազորությունը վերապահում է ոստիկանությանը, մաքսային կոմիտեին, հարկային ծառայությանը և պաշտպանության ազգային մարմիններին: Նախնական քայլեր ձեռնարկվեցին՝ անվճար իրավաբանական օգնության համակարգ ստեղծելու ուղղությամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով, սակայն որևէ հատուկ իրավական ակտ չընդունվեց: Նոր Դատական օրենսգիրքը նախատեսում է Դատական դպրոցի ստեղծում: Դպրոցի կանոնադրությունը

⁴ Առավել ամրապնդել **քաղաքական բազմակարծությունը**՝ շարունակելով խրախուսել ՀՀ և ԵՄ քաղաքական կուսակցությունների և օրենսդիր մարմինների միջև համագործակցությունը: Ամրապնդել ժողովրդավարական կառույցները կուսակցությունների ֆինանսավորման հստակ կանոնների ու թափանցիկ համակարգի ստեղծմամբ, շարունակել համապատասխան ներպետական օրենսդրության ընդունման գործընթացը:

⁵ Շարունակել դատաիրավական **բարեփոխումները՝ ապահովելով նոր օրենսդրության պատշաճ կիրարկումը՝ Դատական օրենսգրքին համապատասխան**: Վերանայել դատավորների նշանակման ներկայիս կարգը՝ գործնականում դատական համակարգի անկախությունն ապահովելու և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու համար: Ապահովել, որ դատական որոշումները կատարվեն գործող օրենսդրությանը համապատասխան: Շարունակել դատավորների և փաստաբանների վերապատրաստումը:

հաստատվել է 2007 թվականի հուլիսին: Ստեղծվեց դատավորների և դատախազների շարունակական վերապատրաստման համակարգ: Այնուամենայնիվ, վերջնական ցուցակից դատավորներ նշանակելու իրավասությունը դեռևս վերապահված է Նախագահին: 2007 թվականի մայիսին Երևանի պետական համալսարանում բացվեց Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն: Ընդհանուր առմամբ, լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ գործնականում դատական համակարգի անկախությունն ապահովելու համար: Մտահոգություններ կան նոր օրենսդրության կիրարկման, դատարանների որոշումների կատարման և դատավորների և իրավաբանների վերապատրաստման կապակցությամբ:

Նախկին **հակակոռուպցիոն**⁶ ռազմավարության գործողության ժամկետը լրացել է 2006 թվականի դեկտեմբերին: Այն քննադատվել է Եվրոպայի խորհրդի ԳՐԵԿՈ-ի խմբի կողմից՝ կոռուպցիայի դեմ պայքարին բավարար չափով չնպաստելու համար: 2008 թվականին կավարտվի նոր հակակոռուպցիոն ռազմավարության⁷ մշակումը, որը պետք է հնարավորինս համապատասխանի ԳՐԵԿՈ-ի խմբի առաջարկություններին՝ մասնավորապես պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերի արդյունավետ ուսումնասիրությունն ապահովող օրենսդրության մասով:

Չնայած ՀՀ քրեական օրենսգիրքը ներառում է ակտիվ և պասիվ կոռուպցիայի վերաբերյալ համապատասխան հոդվածներ, որոնք համահունչ են ԵԽ և Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի չափորոշիչներին, այնուամենայնիվ, «կոռուպցիոն իրավախախտման» սահմանումը դեռևս ներմուծված չէ: 2007 թվականի ընթացքում ԵԱՀԿ, ՏՀԶԿ և ԵԽ ԳՐԵԿՈ-ի խմբի աջակցությամբ միջազգային չափորոշիչներին համապատասխան փոփոխվել և լրացվել են մի քանի այլ օրենքներ և ձեռնարկվել են որոշ միջոցառումներ գործնականում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով (օրինակ՝ ճանապարհային ոստիկանության նոր ընթացակարգեր, դատավորների աշխատավարձի բարձրացում 15-30%-ով): Ներկայումս գոյություն ունեն նաև դատավորի, դատախազի և ոստիկանի վարքագծի կանոնագրքեր: Ընդունվել են կոնկրետ իրավական դրույթներ պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին, իսկ 2007 թվականի դեկտեմբերին ընդունվեց «Հատուկ քննչական ծառայության ստեղծման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է կոռուպցիայի դեմ պայքարը պետական բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Այնուամենայնիվ, կոռուպցիայի վերաբերյալ օրենսդրության կիրարկման և դրա վերաբերյալ ռազմավարության մշակման ուղղությամբ դեռևս պետք է միջոցառումներ ձեռնարկվեն:

⁶ Շարունակել **կոռուպցիայի** դեմ պայքարը: Ընդունել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն և ապահովել, որ այն հնարավորինս համապատասխանի ԳՐԵԿՈ-ի խմբի առաջարկություններին, մասնավորապես պետական պաշտոնյաների գույքի ու եկամուտների մասին հայտարարագրերի արդյունավետ ուսումնասիրությունն ապահովող օրենսդրության մասով: Նոր ռազմավարության ընդունման դեպքում, վերջինիս դրույթները պետք է իրականացվեն հնարավորինս արագ: Շարունակել պետական պաշտոնյաների մասնագիտական վարքագծի կանոնագրքերի մշակումը: Շարունակել աշխատավարձերի աստիճանական բարձրացումն այն ոլորտներում, որտեղ հատկապես մեծ են կոռուպցիոն ռիսկերը:

⁷ Ապահովել քաղաքացիական հասարակության պատշաճ մասնակցությունը պետական ռազմավարության իրականացման և վերահսկման գործում:

Չնայած քաղաքացիական ծառայության համակարգի⁸ համապարփակ գնահատում չի կատարվել, այնուամենայնիվ քայլեր են ձեռնարկվել այդ համակարգի գործունեության բարելավման ուղղությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով էթիկայի կանոնների, կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստումներին և աշխատանքի ընդունման ընթացակարգերի բարելավմանը: Դեռևս չի ավարտվել բոլոր քաղաքացիական ծառայողների համար միասնական իրավական նորմ սահմանելու գործընթացը:

Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ^{9,10}

Նպատակները. ամրապնդել հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, ապահովել լրատվամիջոցների անկախությունը՝ ամրապնդելով հանրային և մասնավոր հեռարձակումը կարգավորող անկախ մարմնի դերը, ապահովել հավաքների ազատությունը, իրականացնել հետազարեփոխումներ քրեակատարողական համակարգում՝ պահելու պայմանները բարելավելու նպատակով, շարունակել գործադրվող ջանքերը արհմիությունների իրավունքները և աշխատանքային հիմնական չափորոշիչները ապահովելու, ազգային փոքրամասնությունների նկատմամբ հարգանքը երաշխավորելու, կանանց և տղամարդկանց հավասարությունը հասարակության մեջ և տնտեսական կյանքում ապահովելու ուղղությամբ:

Որոշակի քայլեր են ձեռնարկվել արտահայտվելու ազատությունն¹¹ ապահովող օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ. 2007 թվականի փետրվարին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններն ուղղված էին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմի հավասարակշռությունն ապահովելուն: Մինչև 2013 թվականն այս մարմնի նկատմամբ վերահսկողությունը կիրականացնի Նախագահը, որից հետո Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների թիվը կհավասարվի Նախագահի կողմից նշանակված անդամների թվին: Հանրային հեռուստատեսության ինքնակերպությունը ղեկավարող Հանրային հեռուստատեսության ինքնակերպության խորհրդի անդամները նշանակվում են բացառապես Նախագահի կողմից: 2007 թվականի հուլիսին Ազգային ժողովը մերժեց օտարերկրյա

⁸ Շարունակել քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխումը՝ բարելավելով դրա գործունեությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով էթիկայի կանոնների վերաբերյալ վերապատրաստումներին, կոռուպցիայի դեմ պայքարի և աշխատանքի ընդունման ընթացակարգերի բարելավմանը: Շարունակել պետական կառավարման միասնական նորմերով կարգավորվող միասնական համակարգի ստեղծմանն ուղղված ջանքերը:

⁹ Նախապատրաստել և մշակել մարդու իրավունքների վերաբերյալ գործողությունների ազգային ծրագիր, որը մանրամասն կվերանայի մարդու իրավունքների վերաբերյալ ներպետական պահանջները, միտված կլինի կոնկրետ գործողությունների իրականացմանը և կսահմանի հստակ գերակայություններ, պարտականություններ, ժամկետներ և հաջողության ցուցիչներ: Ծրագիրը պետք է մշակվի Ազգային ժողովի հետ համագործակցությամբ և քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ:

¹⁰ Առավել բարելավել ու ակտիվացնել համագործակցությունը ՀԿ-ների հետ, մասնավորապես՝ նոր օրենսդրության շրջանակներում՝ սահմանելով համապարփակ իրավաստեղծ ընթացակարգեր, որոնք կապահովեն այդ գործընթացում բոլոր շահագրգիռ խմբերի մասնակցությունը:

¹¹ Ամրապնդել լրատվամիջոցների ազատությունը՝ մասնավորապես որդեգրելով հանրային և մասնավոր հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի անդամների նշանակման բաց ու թափանցիկ գործընթաց՝ առավել ամրապնդելով հեռարձակման արտոնագրեր տրամադրող և վերահսկող մարմնի անկախությունը, ձեռնարկելով հետազարեփոխումներ հստակ քայլեր հանրային և մասնավոր լրատվամիջոցների ազատությունն ու բազմակարծությունն ապահովելու ուղղությամբ և շարունակելով գրապարտության և վիրավորանքի ապաքրեականացման գործընթացը:

հեռուստառադիոհեռարձակողների կողմից հեռարձակվող ծրագրերի սահմանափակումներ նախատեսող երկու օրենսդրական նախագիծ: Կարգավորող մարմինների անկախության շարունակական բացակայությունը և ոչ բավարար լրատվական բազմակարծությունը մնում են մտահոգության առարկա: Դեռևս ամբողջությամբ չի կիրարկվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ մասնավորապես տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման մասով: Նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում մի շարք հեռարձակողներ ենթարկվեցին նաև հարկային ստուգումների, ինչը նրանց նկատմամբ միտումնավոր ահաբեկման վերաբերյալ մտահոգությունների տեղիք տվեց:

2007 թվականի ապրիլին ՀՀ քրեական օրենսգիրք ներմուծված դրույթները նախատեսում են, որ լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը պատժվում է օրենքով, մինչդեռ ինքնագրաքննության գործելակերպը և լրագրողների նկատմամբ բռնության և ահաբեկման դեպքերը շարունակվում են:¹² Զրպարտությունը և վիրավորանքը մասամբ ապաքրեականացվել են: Այնուամենայնիվ, զրպարտությունը և «իշխանության ներկայացուցչին վիրավորելը» պատժվում են նաև ազատազրկմամբ:

Ինչ վերաբերում է հավաքներ անցկացնելու իրավունքին¹³, խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում իշխանություններն արգելեցին ընդդիմության մի շարք երթերի կազմակերպումը, կամ դրանք հանդիպեցին ոստիկանության դիմադրությանը: 2008 թվականի նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում ընդդիմությունը Երևանի կենտրոնում կազմակերպեց երեք խոշոր երթ, որոնց ընթացքում չգրանցվեց ոչ մի խոշոր միջադեպ, թեև ընդդիմության ակտիվ մասնակիցներն այդ երթերից առաջ մի քանի ժամ պահվել էին անազատության մեջ:

Գրանցվել են **խոշտանգումների և վատ վերաբերմունքի** դեպքեր¹⁴, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում, ոստիկանության բաժանմունքներում և ժամկետային զինծառայողների¹⁵ շրջանում: Կալանավայրերի պայմանները և նախնական կալանքի չարաշահումները մնում են մտահոգության առարկա¹⁶:

¹² Ապահովել լրագրողների նկատմամբ բռնության դեպքերի քննությունը և, անհրաժեշտության դեպքում, քրեական հետապնդումը, ինչպես նաև ձեռնարկել միջոցառումներ լրատվամիջոցների ներկայացուցիչների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

¹³ Ամբողջությամբ երաշխավորել **հավաքների ազատությունը**՝ միջազգային պարտավորություններին և Եվրոպայի խորհրդի ու ԵԱՀԿ-ի առաջարկություններին համապատասխան, **մասնավորապես**՝ ապահովելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի համապատասխանությունը միջազգային ու եվրոպական չափանիշներին, դրա կիրառումն այդ չափանիշների համաձայն՝ ձեռնարկելով միջոցառումներ անհիմն ձեռքարկումների և ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման դեպքերը քննելու և, անհրաժեշտության դեպքում, քրեորեն հետապնդելու ուղղությամբ:

¹⁴ Ապահովել **վատ վերաբերմունքի և խոշտանգումների** վերաբերյալ գործերով քննությունը և կատարողների նկատմամբ քրեական հետապնդումը, ներառյալ զինված ուժերում, ինչպես նաև վատ վերաբերմունքից և խոշտանգումներից բոլոր տուժողների համար գործնականում երաշխավորել իրավական պաշտպանության միջոցներ, փոխհատուցում և իրավունքների վերականգնում:

¹⁵ Գնահատել գուտ քաղաքացիական բնույթ կրող՝ իրական **այլընտրանքային ծառայության** հնարավորությունը՝ Եվրոպայի խորհրդի առաջարկություններին համապատասխան:

¹⁶ Շարունակել քրեակատարողական համակարգի հետագա բարեփոխումները՝ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի և խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի առաջարկություններին համապատասխան՝ մասնավորապես ընդունելով խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի առաջարկությունների իրականացման համար գործողությունների ծրագիր, ինչպես նաև ձեռնարկելով

Այնուամենայնիվ, իշխանությունները թույլ տվեցին տեղական ՀԿ-ներին և մարդու իրավունքների պաշտպանության հարցերով միջազգային դիտորդներին մոնիտորինգի ենթարկել կալանավայրերը: Աշխատանքներ կատարվեցին մասնավորապես կանանց և անչափահասներին պահելու պայմանների բարելավման ուղղությամբ: 2006 թվականին Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության (OPCAT) վավերացումից և քաղաքացիական հասարակության հետ կառուցողական խորհրդակցություններից հետո կառավարությունը քայլեր ձեռնարկեց՝ 2007 թվականի վերջին OPCAT-ի ներպետական մեխանիզմը պաշտոնականացնելու ուղղությամբ: Մեխանիզմի համար պատասխանատու է Մարդու իրավունքների պաշտպանը՝ քաղաքացիական հասարակության մասնակիցների հետ համատեղ: Ոստիկանությունում քաղաքացիական ծառայության համակարգի շարունակական բարեփոխումների շրջանակներում¹⁷ 2007 թվականին մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին ոստիկանության անձնակազմի և քաղաքացիական ծառայողների համար:

Աշխատանքային իրավունքի և աշխատավայրում աշխատողների իրավունքների ոլորտում¹⁸ Հայաստանում գործում են սոցիալական և զբաղվածության քաղաքականությունը կարգավորող հիմնական օրենքներ: 2006 թվականի հունվարին, նախքան հաշվետու ժամանակաշրջանը, Հայաստանն ընդունեց «Բնակչության զբաղվածության մասին» նոր օրենք: ՀՀ աշխատանքային օրենսգիրքն¹⁹ ու զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության, սոցիալական աջակցության և պետական կենսաթոշակների մասին օրենսդրությունը պետք է ամբողջությամբ կիրարկվեն (*տե՛ս նաև սոցիալական երկխոսության բաժինը*):

«Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման» 2004-2010 թվականների գործողությունների ազգային ծրագիրն իրականացման փուլում է: Գործողությունների ծրագիրը հանգեցրեց գենդերային հավասարության վերաբերյալ օրենսդրության²⁰ շարունակական վերանայմանը: 2007 թվականի դեկտեմբերին Հայաստանը միացավ Եվրոպայի խորհրդի կողմից

միջոցառումներ քրեակատարողական հիմնարկների և նախնական կալանքի վայրերի հասարակական վերահսկողությունը դնելու ուղղությամբ:

¹⁷ Մերտորեն համագործակցել ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի հետ **ոստիկանության ոլորտում բարեփոխումների** իրականացման հարցում՝ նպատակ ունենալով բարելավել հասարակության վստահությունը ոստիկանության հանդեպ, ինչպես նաև վերացնել խոշտանգումները, վատ վերաբերմունքի այլ ձևերն ու կոռուպցիան:

¹⁸ Շարունակել ջանքերն **արհեստակցական միությունների իրավունքները և հիմնական աշխատանքային չափանիշներն** ապահովելու ուղղությամբ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) համապատասխան կոնվենցիաների համաձայն և հիմք ընդունելով եվրոպական չափանիշները՝ մասնավորապես (i) ապահովելով միավորումներ կազմելու ազատությունը և աշխատանքային կոլեկտիվ պայմանագրերի կնքման իրավունքի ճանաչումը, (ii) վերացնելով աշխատանքի և մասնագիտության ընտրության հետ կապված խտրականությունը և իրականացնելով ԱՄԿ-ի համապատասխան աշխատանքային օրակարգը:

¹⁹ Մինչև 2008 թվականի ավարտը մշակել առանցքային գերակա ոլորտները և դրանց համապատասխան վերջնաժամկետները սահմանող՝ սոցիալական հարցերի վերաբերյալ Սպիտակ փաստաթուղթը և տեղեկացնել այդ փաստաթղթի մասին: Փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում (մասնավորապես աշխատողների իրավունքների պաշտպանության և արտաժամյա աշխատանքի վարձատրության վերաբերյալ դրույթները):

²⁰ Շարունակել գենդերային հավասարության մասին իրավական ակտերի լրամշակումը: Շարունակել ընտանեկան բռնությունների դեմ պայքարին ուղղված ջանքերը՝ կանխարգելիչ միջոցառումներով և պատժամիջոցներով:

իրականացվող՝ «Վե՛րջ կանանց նկատմամբ բռնությանը» արշավին²¹: Այնուամենայնիվ, կանանց նկատմամբ բռնության գործադրումը դեռևս մնում է չկարգավորված: Ավելին, կանայք դեռևս ակտիվորեն ներգրավված չեն երկրի քաղաքական կյանքում: Կանայք կազմում են Ազգային ժողովի պատգամավորների միայն 9%-ը, իսկ գյուղապետերի՝ 2%-ը:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի²² կատարման մոնիտորինգը իրականացվում է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից: Մարդու իրավունքների պաշտպանը նշանակել է այդ հարցերով զբաղվող հատուկ խումբ. այնուհանդերձ, դեռ չի ստեղծվել կոնվենցիայի կիրարկման մոնիտորինգի առանձին մեխանիզմ:

Արտաքին և անվտանգության քաղաքականության, հակամարտությունների կանխման և ճգնաժամերի կառավարման շուրջ համագործակցություն

Նպատակները. ամրապնդել քաղաքական երկխոսության և արտաքին ու անվտանգության հարցերի շուրջ համագործակցությունը, խորացնել անվտանգության ընդհանուր սպառնալիքներին, այդ թվում զանգվածային ոչնչացման զենքերի չտարածմանը և զենքի ապօրինի արտահանումներին դիմակայելու գործընթացում համագործակցությունը, ամրապնդել ահաբեկչության դեմ պայքարում ջանքերն ու համագործակցությունը, մասնակցել տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններին, նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

2007 թվականի հունիսից Հայաստանին առաջարկվել է կոնկրետ դեպքերի առնչությամբ որդեգրել Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության²³ հռչակագրերին համահունչ քաղաքականություն: Հայաստանը հիմնականում հետևել է այդ առաջարկին:

Ինչ վերաբերում է ընդհանուր անվտանգության սպառնալիքներին դիմակայման հարցերում համագործակցությանը, Հայաստանի՝ **Օտտավայի կոնվենցիային**²⁴ միանալու հետագա քայլեր դեռ չեն ձեռնարկվել:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը²⁵ դեռ չի վավերացվել: Որպես առաջին քայլ՝ 2007 թվականի հունիսին կառավարությունը

²¹ Բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը և խթանել ընտանեկան բռնությունների կանխարգելմանն ուղղված ջանքերը:

²² Հայաստանը պետք է պետական և տեղական մակարդակով ստեղծի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված չափանիշների իրականացման վերահսկման ներպետական մեխանիզմ և ապահովի, որ այդ մեխանիզմը լիազորված լինի ստանալու և ընթացք տալու բռնության դեպքերի վերաբերյալ բողոքներին:

²³ Շարունակել համագործակցությունն անվտանգության ընդհանուր սպառնալիքներին դիմակայելու հարցում, ներառյալ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են զանգվածային ոչնչացման զենքերի չտարածումը, զինաթափումը, զենքերի, այդ թվում հրազենի և փոքր տրամաչափի զենքերի վերահսկումը և անօրինական առևտրի դեմ պայքարը:

²⁴ Նախանշել «Հակահետևակային ականների կիրառման, պահեստավորման և փոխանցման արգելման և դրանց վերացման մասին» Օտտավայի կոնվենցիային միանալու քայլերը և ժամկետները:

²⁵ Հայցել Սահմանադրական դատարանի նոր որոշում՝ Հայաստանի՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը միանալու հնարավորության վերաբերյալ:

որոշեց վերսկսել վավերացման գործընթացը, որի համար պահանջվում է սահմանադրական դատարանի կողմից վերագնահատում:

Հայաստանը համագործակցում է ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ **ահաբեկչության հետ կապված հարցերի** մասին տեղեկատվության փոխանակման շրջանակներում, մասնավորապես 2007 թվականի սեպտեմբերին Երևանում ՄԱԿ-ի Հակահաբեկչական կոմիտեի գործադիր տնօրինության գնահատման առաքելության միջոցով, որում ներգրավված էին փորձագետներ ՄԱԿ-ի՝ Թմրանյութերի և հանցավորության հարցերով գրասենյակից, Ինտերպոլից, Համաշխարհային մաքսային կազմակերպությունից, ԱՊՀ-ից և Եվրոպայի խորհրդից:

Տարածաշրջանային համագործակցության ամրապնդում²⁶

Ազգային և տարածաշրջանային մակարդակով սահմանների միասնական կառավարումը բարելավելու նպատակով ԵՀԲԳ-ի Օժանդակության ծրագրի շրջանակներում նախաձեռնվել է Հարավային Կովկասում (2008-2009թթ.) տարածաշրջանային սահմանների կառավարման ծրագիր: 2007 թվականի հոկտեմբերին Բյուրսելում կայացած նախարարների կազմակերպական հանդիպման ընթացքում երկրները համաձայնել են իրականացնել միջոցառումները երկկողմ ձևաչափով (Հայաստան-Վրաստան, Վրաստան-Ադրբեջան):

Հայաստանը Ադրբեջանի, Վրաստանի և Եվրոպական հանձնաժողովի հետ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ՏԲԿ) համահիմնադիրներից է: Այդ կենտրոնը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Թբիլիսիում, խթանում է տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հարևան պետությունների միջև կարողությունների զարգացումը և համագործակցությունը: Հայաստանը ստորագրել է ՏԲԿ-ի նոր խարտիան:

Նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը²⁷

²⁶ Շարունակել տարածաշրջանային և հարակից այլ խնդիրների կարգավորմանը և հաշտեցմանը նպաստելուն ուղղված ջանքերը՝ համագործակցելով հարևան երկրների հետ, շարունակել մասնակցությունը Հարավային Կովկասում շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական ոլորտում տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններին՝ մասնավորապես համագործակցելով Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն (ՏԲԿ) Կովկասի (REC Caucasus) շրջանակներում, ակտիվորեն մասնակցելով ԵՄ Ջրային նախաձեռնության Արևելյան Եվրոպա, Կովկաս և Կենտրոնական Ասիա (EECCA) բաղադրիչի աշխատանքային խմբի հանդիպումներին, շարունակելով ակտիվ մասնակցությունը ԵՄ Ջրային նախաձեռնության ներքո իրականացվող Ազգային քաղաքականության երկխոսությունում, շարունակելով համագործակցությունը էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում ԵՄ/Սև ծովի/Կասպյան ափամերձ պետությունների և հարևան երկրների նախաձեռնության համատեքստում, մասնակցելով Հարավային Կովկասում տարածաշրջանային իրավակիրառ ոլորտում համագործակցության նախաձեռնություններում, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող Հարավային Կովկասի՝ Թմրանյութերի վերաբերյալ Գործողությունների ծրագրում (SCAD), բարձրացնելով երկկողմ և բազմակողմ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում, այդ թվում ամրապնդված տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում շարունակական ներգրավմամբ, ինչպես նաև Սև ծովի և Բալթիկ ծովի տարածաշրջանների միջև:

Շարունակել ներգրավվածությունը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում, մասնավորապես՝ Գիտատեխնիկական համագործակցությունում: Ամրապնդել երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը Հարավային Կովկասի երեք երկրների միջև, մասնավորապես «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրում մասնակցությամբ և ԵՄ Ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով:

²⁷ Հայաստանը և ԵՄ-ն պետք է ակտիվացնեն դիվանագիտական ջանքերը, այդ թվում՝ Եվրոպական միության հատուկ ներկայացուցչի (ԵՄՀՆ) միջոցով և շարունակեն աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը, խթանել ԵՄՀՆ-ի կողմից ձեռնարկվող քայլերը՝ նպաստելու ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտության կարգավորմանը:

Նախագահներ Քոչարյանի և Ալիևի միջև ոչ պաշտոնական հանդիպումը տեղի է ունեցել 2007 թվականի հունիսին Մանկո Պետերբուրգում կայացած ԱՊՀ գագաթնաժողովի ընթացքում: 2007 թվականի հունիսին տեղի են ունեցել Հայաստանի և Ադրբեջանի մտավորականների փոխայցելություններ Ստեփանակերտ/Խանքենդի, Երևան և Բաքու, որի ընթացքում շփումներ են տեղի ունեցել բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Զնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները (Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա և Ռուսաստան) նշել են, որ վերջին տարիների ընթացքում երկու կողմերն էլ զգալիորեն նվազեցրել են իրենց միջև առկա տարաձայնությունները, այնուհանդերձ առկա է մի քանի չկարգավորված հարց. դեռևս քննարկման փուլում է գտնվում Մինսկի խմբի կողմից մշակված փաստաթուղթը, որում ընդգրկված են հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքները և որը ներկայացվել է Հայաստանին և Ադրբեջանին 2007 թվականի հոկտեմբերին Մադրիդում կայացած ԵԱՀԿ նախարարական հանդիպման ժամանակ:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ

Մակրոտնտեսական²⁸ համակարգ և գործող շուկայական տնտեսություն

Ընդհանուր առմամբ Հայաստանը 2007 թվականին պահպանել է մակրոտնտեսական կայուն աճը:

2007 թվականին, շարունակելով նախորդ վեց տարիների ընթացքում արձանագրված միտումը, տնտեսական աճի տեմպն արտահայտվել է երկնիշ ցուցանիշով: Այն հիմնականում պայմանավորված է շինարարության և ծառայությունների հատվածներում գրանցված աճով: Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստել են նաև արտերկրում աշխատող հայերի կողմից կատարվող փոխանցումները, որոնք խթանել են մասնավոր սպառումը և ֆինանսավորել Հայաստանի **առևտրային դեֆիցիտը**: Վերջինս ավելացել է 70%-ով և ակնկալվում է, որ կկազմի ՀՆԱ-ի 15,5%-ը: 2008 թվականի հունվարին ներմուծումն աճել է 37,4%-ով, մինչդեռ արտահանումը՝ 2007 թվականի հունվարի համեմատությամբ միայն 2,4%-ով: 2008 թվականի հունվարին **սղաճը** կազմել է մոտ 6,6% և 2007 թվականին միջինում կազմել է 4,3%՝ գերազանցելով նախատեսված չափը: ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ) կրկնակի բարձրացրել է իր վերաֆինանսավորման դրույքաչափը: Սղաճային ճնշումները պայմանավորված էին աճող ներքին սպառմամբ և ներմուծվող ապրանքների գների աճով, որը խորացել էր Հայաստանի տնտեսությունում ոչ բավարար մրցակցության արդյունքում:

ուղղված ջանքերին՝ միջազգային նորմերի և սկզբունքների համաձայն, նպաստել մարդկային շփումներին՝ **մասնավորապես** խրախուսելով հայաստանյան կազմակերպությունների և մասնակցությունը ԵՀ փոխանակման ծրագրերին:

²⁸ Պահպանել մակրոտնտեսական կայունությունը՝ շարունակելով վարել ողջամիտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ՄՖԿ) հետ համագործակցությամբ, մասնավորապես մշակելով և բարելավելով Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ)՝ ԱՀՌԾ-ի հետ համահունչ և ՄՖԿ-ների հետ համաձայնությամբ՝ Ազգային ժողով ներկայացնելով կենսաթոշակային համակարգը բարեփոխելու վերաբերյալ օրենսդրական նախագիծ՝ ամրապնդելու վճարումների և նպաստների միջև կապը, բանակցելով ԱՄՀ-ի հետ նոր աջակցության ծրագիր իրականացնելու շուրջ, բարելավելով պետական ֆինանսների կառավարումը և թափանցիկությունը, մասնավորապես ներկայիս Գանձապետական համակարգի կատարելագործմամբ և բյուջետային եկամուտների ու ծախսերի պատշաճ աուդիտի իրականացմամբ՝ Համաշխարհային բանկի պետական տնտեսական կառավարման վերաբերյալ ուսումնասիրության առաջարկություններին համապատասխան:

Բյուջեի եկամտային մասի պատշաճ մակարդակով ապահովումը և կապիտալ ծախսերի «թերի» կատարումը հանգեցրել են ՀՆԱ-ի 0,1%-ի չափով բյուջեի ավելցուկի՝ համեմատած բյուջեի նախատեսված դեֆիցիտի հետ: Հարկերի²⁹ հավաքագրման մակարդակը, այնուամենայնիվ, շարունակում է ցածր մնալ՝ համեմատած նմանատիպ տնտեսությունների հետ, սակայն այն բարելավվել է 2007 թվականին: Կառավարությունը փորձել է լուծել այս խնդիրը, սակայն դեռևս չի հասել ցանկալի արդյունքի:

Հայաստանը հետզհետե բարելավել է իր **գործարար միջավայրը**, սակայն բարելավումները, միջազգային ուսումնասիրությունների համաձայն, ավելի դանդաղ են ընթացել՝ նախորդ տարիների համեմատությամբ (տե՛ս Մաս 4. Կարգավորման բարեփոխումներ):

Զբաղվածություն և սոցիալական քաղաքականություն

Հայաստանը աստիճանաբար կրճատել է **աղքատության** մակարդակը³⁰: Աղքատության սահմանագծից ցածր գտնվող բնակչության թվաքանակը 2007 թվականին շարունակել է աստիճանաբար նվազել՝ հասնելով 29%-ի, և այժմ ծայրահեղ աղքատության մասնաբաժինը կազմում է բնակչության 6,5%-ը: Այս արդյունքները կարող են պայմանավորված լինել աշխատավարձի, սոցիալական փոխանցումների և արտերկրից փոխանցումների ծավալի աճով: Կառավարությունը մշակել է 2008-2021 թվականների համար վերանայված՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը: Ռազմավարությունը դեռ անհրաժեշտ է համաձայնեցնել միջազգային դոնորների հետ: Այն սահմանում է գործողությունների հինգ նպատակ՝ մակրոտնտեսական կայունության և մասնավոր հատվածի զարգացման միջոցով կայուն տնտեսական աճի խթանում, պետական ենթակառուցվածքի բարելավում, մարդկային զարգացման խթանում և սոցիալական ապահովության ցանցերի բարելավում, խելամիտ հարկաբյուջետային քաղաքականության իրականացում և հարկային համակարգի բարեփոխում և, վերջապես, պետական հատվածների հիմնական գործառույթների բարելավում:

Հայաստանի վիճակագրական տվյալների համաձայն՝ 2007 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում **պաշտոնական գործազրկության** մակարդակը կազմել է աշխատուժի 7%-ը:

²⁹ Շարունակել հարկային քաղաքականության ոլորտում բարեփոխումների վերաբերյալ ԱՄՆ-ի առաջարկությունների իրականացումը՝ հնարավորինս նվազեցնելով հարկային պարտավորություններից խուսափելու դեպքերը և հարկային ապառքները, ավելացնելով հարկային հավաքագրումները և աստիճանաբար վերացնելով ԱԱՀ-ից ազատումները, ներառյալ գյուղատնտեսության ոլորտում, և օտարերկրյա ներդրողների համար շահութահարկի մասով արտոնությունները, վառելանյութը հաստատագրված հարկումից բերելով կանոնավոր հարկային դաշտ, շարունակելով համապարփակ հարկային վարչարարության արդիականացման ծրագրին ուղղված ջանքերը և հարկային տեսչությունների միջև տեղեկատվության փոխանակումը և SS գործառնական կարողությունը, ավարտին հասցնելով միասնական հարկային օրենսգրքի հատուկ մասը, վերակազմակերպելով Հարկային պետական ծառայության գլխամասերն ըստ գործառույթների, ստեղծելով խոշոր հարկատուների մեկ միասնական տեսչություն, կրճատելով և ռացիոնալացնելով տարածքային հարկային տեսչությունները, ներդնելով նոր պարզեցված ԱԱՀ ռեժիմ որոշակի շեմից ցածր գտնվող ձեռնարկությունների համար, իրականացնելով ԱԱՀ-ի վերադարձման համար ռիսկերի վրա հիմնված ծրագիր, գնահատելով ռիսկերի վրա հիմնված աուդիտի ընտրության համակարգի գործունեությունը և աստիճանաբար բարձրացնելով ծրագրի միջոցով ընտրված աուդիտների քանակը:

³⁰ Շարունակել աղքատության հաղթահարման ուղղված ջանքերը՝ հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունելով վերանայված Աղքատության հաղթահարման ռազմավարությունը 2008-2012 թվականների համար և սկսել դրա դրույթների կիրարկումը՝ որպես բնակչության անապահով հատվածի պայմանների բարելավմանն ուղղված միջնաժամկետ տնտեսական աճի և, ելնելով երկրի կարիքներից, հարստության համաչափ բաշխման համար ուղղորդող համակարգ:

Ինչ վերաբերում է **սոցիալական երկխոսությանը**³¹³², ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է արհմիությունների և գործատուների միությունների իրավունքները և պարտականությունները, իսկ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է իրավական խորհրդատվություն: Անհրաժեշտ է զգալիորեն բարձրացնել պետական մարմինների, արհմիությունների և ՀԿ-ների միջև համագործակցությունը և ներդնել արդյունավետ գործելակերպեր: Շարունակվում են վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի³³ կիրարկման աշխատանքները:

Սոցիալական ներգրավվածության և պաշտպանության ոլորտում Հայաստանը առաջընթաց է արձանագրել Գործողությունների ծրագրի դրույթների իրականացման մասով. կառավարությունը զգալիորեն ավելացրել է սոցիալական հատկացումները և Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակում է կենսաթոշակային համակարգի բարելավմանն ուղղված հավակնոտ ծրագիր: Ակնկալվում է, որ նոր «բազմաայուն» կենսաթոշակային համակարգը³⁴ կսկսի գործել 2009 թվականի հունվարից:

Հայաստանի **գյուղատնտեսության**³⁵³⁶ ոլորտին աջակցում են մի քանի դոնորների օժանդակության ծրագրեր՝ նպատակ ունենալով բարձրացնել գյուղական վայրերում զբաղվածության մակարդակը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունն ու արտադրողականությունը՝ նոր տեխնոլոգիաների ներմուծմամբ, առավել բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանքի խթանմամբ և շուկայական կարողությունների բարելավմամբ: 2006 թվականի դրությամբ Հայաստանում գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 18%, ինչը նվազել է՝ համեմատած վերջին 5 տարիների 22% միջին ցուցանիշի հետ: Գյուղատնտեսական ապրանքների մշակումը կազմում է միջինում ՀՆԱ-ի լրացուցիչ 33%-ը: Գյուղական վայրերում աղքատությունը առաջին անգամ կրճատվել է 2006 թվականին, իսկ ներդրումների ծավալը աճում է, և 2008 թվականին ակնկալվում է հետագա աճ: 2006-2007 թվականների համար գյուղատնտեսության մասով ազգային ծրագիրը ընդգրկում է մի քանի ոլորտներ, ինչպիսիք են՝ անասնաբուժական ստուգումները, բույսերի պաշտպանությունը, սննդամթերքի անվտանգությունը և օրգանական գյուղատնտեսությունը:

³¹ Խորացնել սոցիալական երկխոսությունը բոլոր մակարդակներում, ներառյալ TAIEX-ի աջակցության միջոցով: Կիրարկել Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան:

³² Շարունակել բարեփոխումների իրականացմանն ուղղված ջանքերը՝ ապահովելու հիմնական աշխատանքային չափանիշները, սոցիալական ապահովությունը և սոցիալական պաշտպանությունը՝ շարունակելով եռաայուն կենսաթոշակային համակարգի մշակմանն ուղղված ջանքերը և առավել բարելավելով սոցիալական պաշտպանության համակարգի վարչական կարողությունները՝ հատուկ կարիքներով մարդկանց համար նպաստների երաշխավորման նպատակով:

³³ Իրականացնել Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան:

³⁴ Նախաձեռնել Հայաստանի՝ երկայուն համակարգի վրա հիմնված նոր կենսաթոշակային բարեփոխումների համակարգի ներդրման, ներառյալ կենսաթոշակային հիմնադրամների ստեղծման գործընթացը: Տեղեկացնել համապատասխան վերահսկման խմբին վերահսկման գործողությունների վերաբերյալ:

³⁵ Ամրապնդել ջրային ռեսուրսների կառավարումը՝ առավել բարելավելով ջրի և ոռոգման հատվածներում կատարվող աշխատանքների արդյունավետությունը՝ մասնավորապես նպաստելով խմելու ջրի մատչելիությանը:

³⁶ Բարելավել գյուղատնտեսությունը, գյուղական ենթակառուցվածքը, ջրային ռեսուրսները, սոցիալական պաշտպանությունը և կրթությունը՝ որպես աղքատության դեմ պայքարի միջոց՝ գյուղական ենթակառուցվածքի (երկրորդական և տեղական ճանապարհներ) շարունակական ստեղծման (վերականգնման) միջոցով՝ նպատակ ունենալով, մասնավորապես, ամենաաղքատ և հեռավոր մարզերում խթանել մուտքը շուկաներ՝ բարելավելով ջրի և ոռոգման հատվածներում կատարվող աշխատանքների արդյունավետությունը, բարձրացնելով խմելու ջրի մատչելիությունը՝ Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության շարունակական իրականացմամբ:

Դեռևս 2002 թվականին ստեղծվել էր **կայուն զարգացման** ազգային խորհուրդը, սակայն ոչ մի նիստ չի գումարվել: Կառավարությունը ձեռնամուխ է եղել կայունության հետ կապված հարցերի խթանմանն ուղղված որոշ քայլերի, սակայն կայուն զարգացման ազգային ռազմավարությունը դեռևս չի ընդունվել:

4. ԱՌԵՎՏՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԴԱՇՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ԵՄ-ն Հայաստանի հիմնական **առևտրային** գործընկերն է (2006 թվականին ԵՄ-ի մասնաբաժինը Հայաստանի ընդհանուր արտաքին առևտրում կազմել է 38,9%): Այնուամենայնիվ, 2002-2005 թվականների դրական զարգացումներին հակառակ՝ 2006 թվականին (2005 թվականի համեմատ) ԵՄ-Հայաստան երկկողմ առևտրի ընդհանուր ապրանքաշրջանառությունը նվազել է 15,2%-ով՝ բացառապես Հայաստանից արտահանման ծավալի 35,8%-ի կրճատման պատճառով, իսկ ընդհանուր ապրանքաշրջանառությունը կազմում էր 816 միլիոն եվրո (447 միլիոն եվրո՝ ԵՄ-ից արտահանման և 339 միլիոն եվրո՝ ԵՄ ներմուծման համար): 2007 թվականին երկկողմ առևտրի ծավալները վերականգնվեցին և ընդհանուր ապրանքաշրջանառությունը 2006 թվականի համեմատությամբ աճեց 17,4%-ով՝ հասնելով 958 միլիոն եվրոյի (ԵՄ արտահանման ծավալը նվազեց 26,5%-ով և կազմեց 604 միլիոն եվրո, ԵՄ ներմուծման ծավալը աճեց 4,5%-ով և հասավ 354 միլիոն եվրոյի):

ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված համակարգ» (ԱԸՀ, անգլերեն՝ GSP) սխեմայի ներքո Հայաստանը մասնավորապես հետաքրքրված է 2009 թվականից ստանալու բարելավված արտոնությունների (ԱԸՀ+) որակավորում լավ կառավարման և կայուն զարգացման համար: Այդ նպատակով Հայաստանը պետք է վավերացնի Բուսական և կենդանական աշխարհի վայրի անհետացող տեսակների միջազգային առևտրի կոնվենցիան (CITES), որը ԱԸՀ կանոնակարգում նշված՝ ՄԱԿ/ԱՄԿ 27 միջազգային կոնվենցիաներից վերջին չվավերացված կոնվենցիան է, և արդյունավետորեն կիրարկի բոլոր կոնվենցիաները: Եվրոպական հանձնաժողովը շարունակում է իրականացնել իրագործելիության վերաբերյալ ուսումնասիրություն՝ բացահայտելու ԵՄ և Հայաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման հնարավորությունը:

Հայաստանը սահմանափակ առաջընթաց է արձանագրել ԳՀՀ-ով և ԵՀՔ գործողությունների ծրագրով նախատեսված՝ առևտրի և ներդրումների հետ կապված օրենսդրության համապատասխանեցման հարցում, ինչը, սակայն, կարևոր է Հայաստանի համար՝ ԵՄ շուկա փաստացի մուտքն ապահովելու նպատակով:

Ապրանքների ազատ տեղաշարժի և տեխնիկական կանոնակարգերի ոլորտում Հայաստանը որոշ առաջընթաց է արձանագրել՝ ԵՄ ստանդարտների և կարգավորիչ համակարգի ընդունման մասով: Մշակվել է երկու նոր օրենք՝ «Ստանդարտացման մասին» և «Մերտիֆիկացման մասին»: ԵՄ համապատասխան չափորոշիչները հայկական իրավական ակտեր ներմուծելու առաջընթացը սահմանափակ է: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը (ԱՏՁՆ) միջոցառումներ է նախաձեռնել Ստանդարտների ազգային ինստիտուտի իրավական և վարչական անկախությունն ապահովելու ուղղությամբ: 2007 թվականի ԱՏՁՆ-ի որոշմամբ

ձևավորվել է աշխատանքային խումբ՝ ստանդարտացման³⁷, չափագիտության, համապատասխանության հավաստման և շուկայի վերահսկողության ոլորտներում ընթացակարգերը բարելավելու նպատակով: ԱՏՁՆ-ի նախաձեռնությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են իրազեկության բարձրացմանն ուղղված արշավներ: 2008 թվականի հունվարից Հայաստանը Ստանդարտների եվրոպական մարմինների Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (CEN) փոխկապակցված անդամ է:

Էական առաջընթաց չի արձանագրվել **մաքսային**³⁸ վարչարարության ընդհանուր վարչական կարողությունների հետագա զարգացման, մաքսային էթիկայի քաղաքականության իրականացման, ինչպես նաև ներմուծման և արտահանման կանոնակարգերի և ընթացակարգերի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտներին կանոնավոր խորհրդատվությամբ/տեղեկատվությամբ ապահովելու մեխանիզմի ստեղծմանն ուղղությամբ: Մաքսային ծառայության համակարգչայնացումը շարունակվում է՝ ընտրողականության և ռիսկերի վերլուծության հիման վրա գործող ավտոմատ հայտարարագրման համակարգի օգտագործումն ամբողջ երկրում տարածելու համար: Այնուամենայնիվ, ինտերնետային կապի անբավարար հասանելիությունը դեռ լուրջ խոչընդոտ է: Արդյունքում ներմուծման ժամանակ կատարվող ֆիզիկական ստուգման մակարդակը չափազանց բարձր է և պետք է կրճատվի: Գնահատման կանոնների իրականացումը դեռևս չի համապատասխանում ԵՄ և միջազգային չափորոշիչներին՝ չնայած գործադրվող աննշան ջանքերի: Որոշ առաջընթաց է գրանցվել մաքսագերծումից հետո կատարվող աուդիտի կիրառման հարցում: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել մաքսային վարչարարության՝ որպես ԵՄ-ի հետ առևտրի խթանման և բոլոր սուբյեկտների համար մաքսային կանոնների, ընթացակարգերի և սակագների թափանցիկության երաշխավորման հիմնական գործիքի ընդհանուր վարչական կարողությունների հետագա բարելավմանը:

Հայաստանում առաջընթաց է նկատվել ԵՄ **սանիտարական և բուսասանիտարական**³⁹ ստանդարտների հետ համապատասխանության ոլորտում: Ընդունվել են «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև դրանք կիրարկող օրենսդրությունը: «Անասնաբուժության մասին» օրենքը⁴⁰ մշակման փուլում է: «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը հիմքեր է ստեղծում սննդի շղթայի հետազոտության համակարգի զարգացման համար: Հայաստանն

³⁷ Շարունակել ԵՄ ստանդարտների թարգմանությունը հայերեն: Ամրապնդել ստանդարտացման գործընթացում շահառուների մասնակցությունը:

³⁸ Նախաձեռնել բարեփոխումներ մաքսային համակարգում՝ բարձրացնելով մաքսային մարմինների ընդհանուր վարչական կարողությունը միջազգային չափանիշների և լավագույն գործելակերպի, ներառյալ Հանձնաժողովի՝ մաքսային համակարգի գնահատման ուղեցույցների հիման վրա, մասնավորապես ապահովելու մաքսային համակարգի գնահատման կանոնների ճշգրիտ իրականացումը, ավելի լավ իրականացնելու ռիսկի գնահատման վրա հիմնված մաքսային ստուգումները և ստուգումները մաքսագերծումից հետո: Մաքսային մարմինների մոտ ձևավորել տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ բավարար աշխատանքային կարողություններ և խթանել անձնակազմի վերապատրաստումը: Ապահովել Մաքսային վարքագծի քաղաքականության իրականացումը ղեկավարության կողմից իրականացվող վերահսկման միջոցով, որոնք ապահովում են վարքագծի քաղաքականության գործնական կիրառումը:

³⁹ Շարունակել ամրապնդել հաստատությունները և բարելավել սանիտարական և բուսասանիտարական վերահսկման գործելակերպը ու համապատասխանեցնել դրանք ԵՄ օրենսդրությանը:

⁴⁰ Ընդունել անասնաբուժության մասին օրենք:

ուժեղացրել է վերահսկողությունը՝ Գյուղատնտեսության նախարարությանը կից սննդի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության ստեղծմամբ: Այն գործում է Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիային համապատասխան: ԵՄ-ն թույլատրել է Հայաստանին արտահանել կենդանի խեցգետիններ (մթերված՝ վայրի պայմաններում): Եվրոպական հանձնաժողովի Մննդամթերքի և անասնաբուժության գրասենյակի կողմից Հայաստանում ձկնեղենի ստուգումներից հետո Եվրոպական հանձնաժողովը երկարացրեց կենդանի, պատրաստի և/կամ սառեցված խեցգետինների (մթերված՝ վայրի պայմաններում) արտահանման թույլտվության գործողության ժամկետը:

Հայաստանի օրենսդրությունը և գործելակերպերը ԵՄ կանոններին^{41,42} առավել համապատասխանեցնելու ուղղությամբ ձեռնարկվել են որոշ քայլեր, ներառյալ վարչական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ, սակայն այս բնագավառում աշխատանքը դեռևս պետք է շարունակվի: Գործարարության մասին օրենսդրության⁴³ կիրարկման հետ կապված հարցերում թափանցիկության և կանխատեսելիության բացակայությունը, ինչպես նաև լայնատարած կոռուպցիան շարունակում են խոչընդոտել **ներդրումային միջավայրի**⁴⁴ **բարելավմանը**: Օտարերկրյա ուղղակի ներդրումներ հետագայում ներգրավվելու համար դեռևս անհրաժեշտ է զգալի ջանքեր գործադրել:

Ընկերությունների հիմնադրման ոլորտում^{45,46}, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դյուրինության վերաբերյալ միջազգային ուսումնասիրությունների համաձայն, Հայաստանը բավականին լավ դիրքերում է, մասնավորապես սեփականության գրանցման մասով: **Ընկերությունների իրավունքի** ոլորտում գործում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը: Հայաստանը փոփոխություններ է կատարել սնանկացման ընթացակարգերում՝ ընդլայնելով ընկերությունների գրանցման համար մատչելի գործողությունների շրջանակը:

⁴¹ Շարունակել ջանքերը համապատասխան ԵՄ չափանիշների՝ հայերեն թարգմանելու գործընթացն ավարտին հասցնելու ուղղությամբ:

⁴² ԵՄ-ն և Հայաստանը պետք է քննարկեն Երևանում Եվրոպական տեղեկատվական կենտրոնի ստեղծման հնարավորությունները:

⁴³ Աշխատել առևտրային վեճերի լուծման այլընտրանքային եղանակների ուղղությամբ՝ մշակելով օրենսդրություն, որն ապահովում է միջազգային չափանիշներին համապատասխան արբիտրաժային ընթացակարգերի իրականացումը:

⁴⁴ Աշխատանքներ տանել էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար համապարփակ կարգավորիչ համակարգի ընդունման ուղղությամբ և խթանել տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը՝ առևտրային հատվածների կողմից (էլեկտրոնային բիզնես):

⁴⁵ Ավարտին հասցնել ընկերությունների հիմնադրման խոչընդոտների շարունակական վերանայումը և, անհրաժեշտության դեպքում, մշակել օրենսդրական փոփոխություններ: Բարելավել էլեկտրոնային կառավարման սկզբունքները, ընդլայնել ընդգրկվածությունը և ընդունել էլեկտրոնային ստորագրության մասին օրենք:

⁴⁶ Մշակել և իրականացնել գործարար միջավայրի բարելավման համապարփակ ծրագիր՝ մասնավորապես բարելավելով ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և դադարեցնելու, աշխատանքի ընդունելու և ազատելու, գույքը գրանցելու, վարկ ստանալու, ներդրողներին պաշտպանելու և պայմանագրերը կատարելու պայմանները, հատկապես ամրապնդելով և արդիականացնելով ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկումը՝ նպատակ ունենալով ուշադրություն դարձնել ֆինանսական հատվածի զարգացման մյուս խոչընդոտների վրա՝ սնանկացման նոր ընթացակարգերի շարունակական իրականացմամբ, արագացնելով հայց ներկայացնելու և պատասխանողին ծանուցելու, ակտիվների հանրային վաճառքի գործընթացները, բարելավելով ֆինանսների մատչելիությունը ՓՄՁ-ների համար և ապահովելով ներդրողների պաշտպանությունը՝ տվյալների հրապարակման պահանջները խստացնելու միջոցով: Բարելավել գործարար միջավայրը պատշաճ կերպով կիրարկելով «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքը, ամրապնդելով Զարգացման հայկական գործակալության վարչական կարողությունները և ապահովելով մտավոր սեփականության վերաբերյալ օրենսդրության համապատասխանությունը ԳՀՀ-ով ստանձնած պարտավորություններին և TRIPS-ի պահանջներին և դրա արդյունավետ կատարմանը:

Շառայությունների ոլորտում Հայաստանը շարունակում է առաջընթաց արձանագրել ԱՄՆ-ի Ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի (ՖՀԳՕ) առաջարկությունների իրականացման ուղղությամբ: Ֆինանսական ոլորտի բարեփոխումները միտված են բանկային համակարգի արդյունավետության բարելավմանը, բանկային կորպորատիվ կառավարման վրա ուշադրություն դարձնելուն, ինչպես նաև արդյունավետ բանկային վերահսկողության նպատակով Բազել II-ի⁴⁷ դրույթների առաջին սյան իրականացմանը: Այս համատեքստում, «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միասնական համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքով դեռևս 2006 թվականին ստեղծվել է ֆինանսական ծառայությունների Միասնական վերահսկող մարմին: ՀՀ կենտրոնական բանկը ձեռնամուխ է եղել մի շարք միջոցառումների, որոնք ուղղված են ապահովագրության ոլորտի գործունեության բարելավմանը: Մասնավորապես, ընդունվել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը: Մշակվել է «Արժեթղթերի մասին» օրենքը, որում ներառված են նվազագույն կապիտալի պահանջները:

Այլ հիմնական բնագավառներ

Առաջընթաց է գրանցվել հարկային համակարգում⁴⁸: Ընդունվել է 2007-2009 թվականների հարկային համակարգի զարգացման վերաբերյալ կառավարության որոշումը՝ համաձայն ԱՄՆ-ի առաջարկությունների: Ընդունվել է նաև ԱՀԿ-ի պահանջները բավարարող՝ գյուղատնտեսական բնագավառում ԱԱՀ-ի հարկային արտոնությունների առկա համակարգը փոխարինող իրավական ակտ:

«Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներառում է հարկերի գրանցման և դուրսգրման հարցեր, ուժի մեջ մտավ 2008 թվականին: Համակարգը նախատեսում է էլ ավելի հեշտացնել և արագացնել գրանցման ընթացակարգը: Այնուամենայնիվ, որոշ հասարակական կազմակերպություններ լուրջ մտահոգություն են հայտնել ՓՄՁ-ների վրա այս բարեփոխման ազդեցության, ինչպես նաև հարկի կանխավճարների համակարգի լայնածավալ օգտագործման վերաբերյալ: Օրենքը ներկայումս գտնվում է վերանայման փուլում: Հայաստանը նախատեսում է ավարտել միասնական հարկային օրենսգրքի մշակումը, որը հնարավորություն կտա 2008 թվականին վերջ դնել արտասահմանյան ներդրողներին եկամտահարկից ազատելու գործելակերպին և կսահմանափակի պարզեցված և հաստատագրված հարկային ռեժիմի կիրառումը՝ նպատակ ունենալով 2010 թվականին տեղափոխել գործունեության բոլոր տեսակները սովորական հարկային ռեժիմ: «Գույքի հայտարարագրման մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնելու 2008 թվականին:

⁴⁷ Շարունակել աշխատանքները՝ Բազել II դրույթների իրականացման համար կարգավորիչ համակարգը հաստատելու ուղղությամբ: Շարունակել աշխատանքներն ապահովագրության ոլորտի բարեփոխման ուղղությամբ (հատկապես առողջության և ավտոմեքենաների ու անհրաժեշտ ենթակառուցվածքի պարտադիր ապահովագրության նպատակով):

⁴⁸ Շարունակել հարկային համակարգի և հարկային վարչարարության բարեփոխումը միջազգային չափանիշների և լավագույն գործելակերպի, ներառյալ Հանձնաժողովի՝ հարկային համակարգի գնահատման ուղեցույցների հիման վրա: Իրականացնել 2007-2009 թվականների հարկային համակարգի զարգացման մասին ՀՀ կառավարության որոշումը: Ընդունել միասնական հարկային օրենսգրքի՝ վերացնելով օտարերկրյա ներդրողների համար շահութահարկից ազատումը և առավել սահմանափակել պարզեցված ու հաստատագրված հարկային ռեժիմների կիրառումը:

Գործարար համայնքի համար ստեղծել հարկերի հավաքագրման հարցերով խորհրդատվական մարմին:

Հարկային վարչարարության ոլորտում առաջընթաց է գրանցվել աուդիտի և ԱԱՀ-ի վերադարձման ռիսկի գնահատման էլեկտրոնային համակարգի մշակման, ինչպես նաև Հարկային պետական ծառայության (ՀՊԾ) և Մաքսային պետական կոմիտեի (ՄՊԿ) միջև գործունեության համակարգման ամրապնդման հարցում: Հարկահավաքման համակարգը բարելավելու նպատակով ներկայումս իրականացվում է ծրագիր, որը հարկատուներին իրենց հայտարարագրերը էլեկտրոնային տեսքով ներկայացնելու հնարավորություն է ընձեռում: Ջանքեր են գործադրվել նաև արտահանողներին վերադարձվելիք ԱԱՀ-ի կուտակված պարտքը նվազեցնելու և հետագայում ԱԱՀ-ի հարկի պարտքերի կուտակումից խուսափելու ուղղությամբ:

Մրցակցային քաղաքականության ոլորտում⁴⁹ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ակտիվորեն աշխատել է մրցակցության մասին օրենսդրության խախտումների բացահայտման ուղղությամբ և հրապարակել իր գործունեության տարեկան հաշվետվությունները: Մրցակցության կարգավորման բարելավման տեսանկյունից 2007 թվականի ապրիլից ուժի մեջ են մտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի մի շարք փոփոխություններ, որոնք, ի թիվս այլ իրավունքների, հանձնաժողովին տվել են նաև մրցակցության կանոնների խախտումների վերահսկողության և առավել խիստ պատժամիջոցների կիրառման հնարավորություն: Պետական աջակցության բնագավառում 2007 թվականի վերոնշյալ օրենքում կատարված փոփոխություններում ներառված են դրույթներ, որոնք Հանձնաժողովին իրավասություն են վերապահում վերահսկելու Հայաստանում տրամադրվող պետական աջակցությունը:

Մտավոր սեփականության իրավունքի^{50,51} ոլորտում հաշվետու ժամանակահատվածում Հայաստանը որոշակի օրենսդրական նախաձեռնություններ է կատարել ապրանքանիշերի և հեղինակային իրավունքի բնագավառներում իր օրենսդրությունը ԵՄ և միջազգային չափանիշներին էլ ավելի համապատասխանեցնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, ԳՀՀ-ի և Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի (TRIPS, Agreement on trade-related aspects of intellectual property rights)

⁴⁹ Ուժեղացնել հակամրցակցային համաձայնագրերի և համակենտրոնացումների ոլորտում վերահսկողությունը: Համապատասխանեցնել մրցակցության ոլորտը կարգավորող օրենսդրությունը ԵՄ համապատասխան օրենսդրությանը: Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ դատավորների մոտ մրցակցային կանոնների մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:

⁵⁰ Ընդունել նորարարությունների (արտոնագրերի) և արդյունաբերական նմուշների մասին օրենք: Ընդունել բույսերի նոր տեսակների պաշտպանության վերաբերյալ նոր օրենսդրություն և միանալ «Բույսերի նոր տեսակների պաշտպանության մասին» (UPOV) կոնվենցիային: Շարունակել մտավոր սեփականության իրավունքի մասին օրենսդրության արդյունավետ իրականացումն ու կատարումը խթանելուն ուղղված ջանքերը և խստացնել համապատասխան իրավական միջոցառումները: Շարունակել շրջանառության մեջ գտնվող նմանակված (counterfeit) և կեղծ (pirated) օրինակների կրճատմանն ուղղված ջանքերը, տրամադրել համապատասխան գործողությունների մասին վիճակագրական տվյալներ: Շարունակել մտավոր սեփականության իրավունքի ոլորտում գործող մարմինների վարչական կարողությունների բարձրացմանն ուղղված ջանքերը: Ամրապնդել ոստիկանության մտավոր սեփականության պաշտպանության հարցերով զբաղվող հատուկ բաժինը և տեղեկացնել դրա աշխատանքների վերաբերյալ: Ուժեղացնել մտավոր սեփականության իրավունքի ոլորտում իրազեկության բարձրացմանն ուղղված գործողությունները:

⁵¹ Տրամադրել սպառիչ տեղեկություններ մտավոր սեփականության իրավունքի կիրարկման համար պատասխանատու կառույցների և համապատասխան գործիչների միջև համակարգման վերաբերյալ: Տրամադրել կեղծումների բոլոր մակարդակների և առգրավումների մասին տվյալները, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքի մասին ցանկացած այլ համապատասխան տվյալներ:

դրույթներին լիովին համապատասխանելու համար դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ օրենսդրական և օրենսդրության կիրարկման տեսանկյունից. Հայաստանը դեռ չի ընդունել նոր բուսատեսակների պաշտպանության մասին համապատասխան օրենսդրություն, և ապահովված չէ օտարերկրյա ստեղծագործությունների և ձայնագրությունների հետադարձ պաշտպանությունը: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքում դեռևս չեն կատարվել հեղինակային և հարակից իրավունքների խախտումների համար պատժի խստացում նախատեսող փոփոխություններ: Հայաստանը դեռևս կարիք ունի զգալիորեն արագացնելու մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրության արդյունավետ կիրարկման աշխատանքները, քանի որ հեղինակային իրավունքների խախտումները և կեղծարարությունը դեռևս լուրջ խնդիր են հանդիսանում: Այս հարցերի լուծման համար անհրաժեշտ է եականորեն բարձրացնել տարբեր իրավակիրառ մարմինների վարչական կարողությունները, ստեղծել համակարգող մարմին և ունենալ կանխարգելող ու գործառական իրավական համակարգ:

Հայաստանի առջև խնդիրներ են ծառացած 2000 թվականին ընդունված «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքի⁵² կիրարկման հարցում և, հետևաբար, այս ոլորտում աննշան առաջընթաց է գրանցվել ԵՀՔ Գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման մասով: Պետական գնումների գործակալությունը ունի կադրերի պակաս: Չնայած իրազեկության բարձրացմանը և վերապատրաստման աշխատանքներին, դեռևս առկա է հանրային գնումների համակարգի մասին տեղեկատվության ավելի լայն տարածման, բողոքարկման՝ վստահելի մեխանիզմի ներդրման և գնումներ իրականացնող մարմինների՝ համապատասխան օրենսդրության մասին իրազեկության բարձրացման և այն պահպանելու անհրաժեշտությունը: Ներկայումս իրականացվում են էլեկտրոնային աճուրդի համակարգի ստեղծման աշխատանքները: Հայաստանը հանդիսանում է ԱՀԿ «Պետական գնումների մասին» համաձայնագրի դիտորդ և հաստատել է դրան միանալու իր ցանկությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել բարելավելու իր **վիճակագրական համակարգը**՝ աղքատության նվազեցման մոնիտորինգը կատարելագործելու նպատակով: Մասնավորապես, այն տեղական մակարդակով ստեղծել է վարչական ռեգիստրներ: ԵՃ օժանդակությամբ Հայաստանը աշխատում է Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի (NUTS) ներդրման ուղղությամբ:

Միջազգային կառույցների աջակցությամբ Հայաստանն աշխատում է **աուդիտի և հաշվապահական հաշվառման ստանդարտները**⁵³ բարելավելու և դրանք միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու, ինչպես նաև անկախ ինքնակարգավորվող մարմին ստեղծելու ուղղությամբ:

⁵² Ապահովել պետական գնումների կանոնների պատշաճ իրականացումը՝ պայմանավորվող կողմերի մակարդակով և ստեղծելով բողոքարկման հուսալի համակարգ: Ընդունել նախագծային փաթեթ Պետական գնումների գործակալության վարչական կարողությունների բարելավման նպատակով: Տեղեկացնել էլեկտրոնային գնումների ռազմավարության և համապատասխան ծրագրակազմի համար մրցույթի մասին:

⁵³ Մինչև 2008 թվականի ավարտը թարգմանել հաշվապահական բոլոր ստանդարտները: Ավարտին հասցնել 2001 թվականի անհամապատասխանության վերաբերյալ ստանդարտների վերանայումը: Կիրառել ինքնակարգավորվող անկախ մարմին մոդելը, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին:

Պետական ներքին ֆինանսական վերահսկողության ոլորտում Հայաստանը նախատեսում է ներկայացնել ներքին աուդիտի մասին օրենք և ներքին աուդիտի ներդաշնակեցման նպատակով ստեղծել կենտրոնական մարմին: Կառավարչական պատասխանատվության սկզբունքների ներմուծումը դեռևս գտնվում է նախնական փուլում:

Ձեռնարկությունների քաղաքականություն^{54,55} ոլորտում կառավարությունը, համաձայն համապատասխան օրենսդրության, հաստատել է ՓՄՁ-ների պետական աջակցության 2008 թվականի ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել ՓՄՁ-ների դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Հայաստանի կողմից այս բնագավառում իրականացվող քաղաքականությունը ներառում է ՓՄՁ-ների զարգացման ռազմավարության բոլոր այն բաղադրիչները, որոնք ուղղված են բարենպաստ գործարար միջավայր ստեղծելուն, ՓՄՁ-ների, օժանդակ ենթակառուցվածքների, ինչպես նաև տեխնիկական և ֆինանսական աջակցության զարգացմանը: Հայաստանի Զարգացման ազգային կենտրոնի (ԶԱԿ) գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրերը ներառում են Հայաստանի գործարարության ընդլայնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների լայն շրջանակ, ինչպես օրինակ նորարարության և նոր տեխնոլոգիաների ներմուծում, գործարար տեղեկատվություն, խորհրդատվություն, վերապատրաստում, ապրանքների և ծառայությունների շուկայահանում, ինչպես նաև ՓՄՁ-ների ֆինանսական աջակցության ծրագրեր: Հայաստանն առաջարկել է ստեղծել Ձեռնարկությունների Եվրոպայի ցանցի հաղորդակցման կենտրոն:

5. ՀԱՄԱԳՈՐԾՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Սահմանների կառավարում

Հարավային Կովկասի սահմանների միասնական կառավարման նոր ծրագիրը բաղկացած է մեկ ընդհանուր վերապատրաստման բաղադրիչից, Հայաստան-Վրաստան և Վրաստան-Ադրբեջան երկու երկկողմ համագործակցության բաղադրիչներից, և երեք ազգային բաղադրիչներից, որոնք զարգացնում են տարածաշրջանում սահմանների ռազմավարական կառավարման կարողությունները՝ միասնական ներդաշնակ սահմանային կառավարման համակարգերի ներմուծման նպատակով: Այս ծրագրին նախապատրաստվելու համար ներկայումս իրականացվում է վերապատրաստման ծրագրերի մշակման գործընթացը (*տե՛ս նաև տարածաշրջանային համագործակցություն բաժինը*):

Միգրացիայի⁵⁶ ոլորտում Հայաստանը բանակցում է մի շարք ԵՄ երկրների հետ միգրանտների իրավունքների պաշտպանության շուրջ: Հետընդունման մասին

⁵⁴ Ամրայնվել ստանդարտացման, հավատարմագրման, համապատասխանության հավաստման, չափագիտության և շուկայի վերահսկողության համար պատասխանատու կառույցները:

⁵⁵ Համատեղ նախանշել արդյունաբերական առաջնային հատվածները օրենսդրական հնարավոր համապատասխանեցման համար՝ այդ թվում արտադրողների և արտահանողների հետ խորհրդակցությունների միջոցով:

⁵⁶ Մշակել միգրացիային և ապաստանին առնչվող խնդիրների վերաբերյալ համապարփակ, համահունչ և հավասարակշռված ազգային գործողությունների ծրագիր: Կազմել միգրացիոն հոսքերի վերահսկման համար էլեկտրոնային տվյալների բազա: Բարելավել ապաստանի և փախստականների մասին ներպետական օրենսդրությունը՝ միջազգային և ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով և ապահովել դրա պատշաճ կիրարկումը:

համաձայնագրեր են կնքվել Դանիայի, Լիտվայի և Գերմանիայի հետ, և բանակցություններ են ընթանում Բենիլյուքսի երկրների հետ: Կառավարությունն իր գործողությունները կենտրոնացնում է կանխարգելիչ միջոցների վրա՝ ներառյալ շրջաններում աշխատուժի թրաֆիքինգի վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացման, օրինական և անօրինական իրավիճակների (օրինակ՝ կառավարական թեժ գծեր) և գործատուների վստահելիության վերաբերյալ հանրային տեղեկատվության տրամադրման միջոցառումներ:

Միգրացիայի մասին տվյալների բազայի էլեկտրոնային համակարգերը գործում են սահմանային որոշ անցակետերում: Նման համակարգեր կառուցվում են նաև այլ սահմանային անցակետերի համար: Այնուամենայնիվ, այս համակարգերը Հայաստան մտնող և Հայաստանից դուրս եկող անձանց թվից բացի ոչ մի ուրիշ տվյալ, հավանաբար, չեն գրանցում:

Միջոցառումներ են ձեռնարկվել բարելավելու **մուտքի արտոնագրի**⁵⁷ պիտակները և անվտանգության պահանջվող մակարդակին հասնելու համար արդիականացման քայլերը: Ներկայումս անձնագրերը համապատասխանում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) և Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից հաստատված անվտանգության նվազագույն չափորոշիչներին. կառավարությունը, այնուամենայնիվ, քննարկում է մեքենայաընթեռների ճամփորդական փաստաթղթերի մասին ԻԿԱՕ-ի հաստատված վերջին չափորոշիչներին համապատասխանող նոր անձնագրեր թողարկելու հնարավորությունը: Հայաստանի ոստիկանությունը Երևանում կենտրոնացրել է թվային լուսանկարներով անձնագրերի մշակումը և հանձնումը, և նախատեսվում է, որ սա կդառնա ընդունված ընթացակարգ ամբողջ հանրապետությունում:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հետ համատեղ՝ կառավարությունն ընդլայնում է ապաստան տալու հնարավորությունները և ինտեգրման աջակցություն ցուցաբերում (օրինակ՝ միկրովարկեր) ապաստան հայցող սահմանափակ թվով անձանց (ներկայումս՝ մի քանի հայեր Իրաքից): «Փախստականների և **ապաստանի** մասին» լրամշակված օրենքը, որը նախատեսվում է, որ կընդունվի 2008 թվականի սկզբին, Հայաստանի օրենսդրությունը և գործելակերպը կներդաշնակեցնի այս բնագավառում միջազգային չափորոշիչների հետ: Ավելին, Հայաստանը քայլեր է ձեռնարկում աշխատուժի թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ և համագործակցում է ԵՄ մի քանի երկրների հետ միգրանտների իրավունքների պաշտպանության և նրանց հետընդունման բնագավառում:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի⁵⁸ ոլորտում գործում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի օրենսդրական համակարգ, որին լրացնում է 2007 թվականի դեկտեմբերին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում 2007–

⁵⁷ Նախաձեռնել ճամփորդական փաստաթղթերի և մուտքի արտոնագրերի (վիզաների) անվտանգության ապահովմանն ուղղված համագործակցության հստակ քայլերի ծրագրումը:

⁵⁸ Նախանշել քայլեր «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան կիրարկելու ուղղությամբ և միանալ «Չենքի և զինամթերքի, դրանց հիմնական և բաղկացուցիչ մասերի ապօրինի արտադրության և վաճառքի մասին» արձանագրությանը: Ստեղծել ինտերնետում անօրինական բովանդակության վերաբերյալ ստացված հաղորդումների գնահատման կենտրոնական մարմին:

2009 թվականների ընթացքում թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման» ազգային ծրագիրը: Այնուամենայնիվ, դրա համարժեք կիրարկումն ապահովելու համար ֆինանսական և մարդկային ռեսուրսների ավելացման հետ մեկտեղ առաջարկվում է ավելի համապարփակ օրենսդրություն և համակարգման բարելավված մեխանիզմներ: 2007 թվականի կեսերին մեկնարկեց թրաֆիքինգի դեմ պայքարի⁵⁹ տարածքային երկամյա նախագիծ, որն աջակցելու է ծրագրի իրականացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանխարգելիչ միջոցառումներում իրազեկության բարձրացմանը և աշխատանքի շուկայի ինստիտուտների ներգրավմանը, ազգային իշխանությունների՝ թրաֆիքինգի դեպքերի բացահայտման կարողությունների զարգացմանը և զոհերի ինքնության պարզմանն ու պաշտպանությանը:

Չնայած Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, **թմրանյութերի**⁶⁰ դեմ ուղղված համապարփակ ազգային ռազմավարություն մշակելու, կանխարգելիչ և պատժիչ միջոցառումների հավասարակշռման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և միջազգային բավարար ներդրման ապահովման համար անհրաժեշտ է հետագա աշխատանք: Ի լրումն, Հայաստանը տարածաշրջանային մակարդակով լիարժեք կերպով ներգրավվել է Թմրանյութերի դեմ պայքարի հարավկովկասյան ծրագրում (SCAD):

Հայաստանը քաղաքական մակարդակով ստանձնել է **փողերի լվացման** դեմ պայքարի⁶¹ պարտավորություն: Այս հարցը քննարկվում է Փողերի կեղծման և խարդախության դեմ պայքարի միջկառավարական հանձնաժողովի աշխատանքային խմբում: 2007 թվականին այն ճանաչեց բարեգործությունը որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համար բարձր ռիսկային գործունեություն: Անհրաժեշտ է կատարել հետագա աշխատանք՝ փողերի լվացման մասին համապատասխան իրավական դրույթների կիրառումը բարեգործություն իրականացնող և այլ շահույթ չհետապնդող անձանց նկատմամբ՝ աշխատանքային խմբի առաջարկությունների համաձայն: 2007 թվականի հուլիսին Հայաստանն անդամակցեց Էգմոնտ խմբի՝ ՀՀ ԿԲ-ի Ֆինանսական դիտարկումների կենտրոնին: «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավման և առգրավման ու ահաբեկչության ֆինանսավորման մասին» ՄԱԿ-ի 2005 թվականի կոնվենցիան⁶² դեռ չի վավերացվել Հայաստանի կողմից, չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվել են Կոնվենցիայի դրույթները հաշվի առնող փոփոխություններ: Միջգերատեսչական համագործակցությունը և համակարգումը բարելավվելու հետագա ջանքերի հետ մեկտեղ փողերի լվացման դեմ պայքարի գործող

⁵⁹ Սկսել թրաֆիքինգի զոհերի պաշտպանության, աջակցության և վերականգնման մեխանիզմների մշակումը:

⁶⁰ Սկսել թմրանյութերի դեմ ուղղված ռազմավարության մշակումը, նախանշել և ստեղծել SCAD-ի ներքո հետագա ազգային ռազմավարության և տարածաշրջանային գործողությունների միջև կապ: Վերանայել ներպետական օրենսդրության շրջանակներում փողերի լվացման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Կատարելագործել վերապատրաստումների համակարգը և միջգերատեսչական համակարգման մակարդակը:

⁶¹ Նախանշել քայլեր «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005 թվականի կոնվենցիան վավերացնելու ուղղությամբ:

⁶² Նախապատրաստական աշխատանքներ տանել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիան վավերացնելու ուղղությամբ:

օրենսդրության միջոցով պետք է կիրառվեն արդյունավետ պատժամիջոցներ: Մարդկային և տեխնիկական ռեսուրսների զարգացումն այս առումով չափազանց կարևոր է և կշարունակի մնալ որպես մարտահրավեր:

Ոստիկանության և դատական մարմինների համագործակցության⁶³ ոլորտում Հայաստանը 2002 թվականին վավերացրել է «Քրեական հարցերում փոխօգնության մասին» Եվրոպական կոնվենցիան: Այնուամենայնիվ, այդ Կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը դեռ չի վավերացվել, և «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՄԱԿ–ի կոնվենցիայի լիարժեք և արդյունավետ կիրարկման ապահովման համար պահանջվում են հետագա աշխատանքներ: 2007 թվականի մարտին Հայաստանը վավերացրեց «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թվականի Հաագայի կոնվենցիան⁶⁴: Եվրոպայի խորհրդի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) աջակցությամբ ոստիկանական համակարգում կատարվող բարեփոխումների շրջանակներում ներկայացվել է համայնքային պարեկության փորձնական մոդել: Ոստիկանության և իրավակիրառ այլ մարմինների միջև համագործակցության և համակարգման հետագա բարելավումը, ինչպես նաև վերապատրաստումների գործընթացի համար բավարար միջոցների ներդրումը պետք է դիտարկվեն որպես անհետաձգելի առաջնահերթություններ:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Տրանսպորտի⁶⁵ ազգային քաղաքականությունը վերանայվել է՝ մասնավորապես նախկինում պետական տրանսպորտային կազմակերպությունների մեծ մասի սեփականաշնորհումից հետո նախարարության քաղաքականության ձևավորման և կարգավորիչ գործառույթի պարզաբանման նպատակով: Դեռևս առկա է տրանսպորտի հատվածում տարբեր կարգավորող մարմինների վարչական կարողությունների ամրապնդման անհրաժեշտությունը:

Ճանապարհների հատվածում Հայաստանը սկսել է արձագանքել ճանապարհների անվտանգության հարցերին՝ ընդլայնելով տեխնիկական պահանջների շրջանակները և համապատասխանեցնելով դրանք վտանգավոր ապրանքների տեղափոխման մասին միջազգային կանոններին: Այնուամենայնիվ,

⁶³ Նախանշել քայլեր «Քրեական գործերում փոխադարձ աջակցության մասին» Եվրոպական կոնվենցիայի երկրորդ արձանագրությանը միանալու և այն կիրարկելու ուղղությամբ:

⁶⁴ Ձեռնարկել հետագա քայլեր «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թվականի Հաագայի կոնվենցիան կիրարկելու ուղղությամբ:

⁶⁵ Ձեռնարկել քայլեր տրանսպորտի ոլորտում տարբեր կարգավորիչ մարմինների վարչական կարողությունների բարձրացման և համակարգման խթանման ուղղությամբ: Վերանայել ճանապարհային ստուգման ընթացակարգերը՝ դրանց թափանցիկությունը բարձրացնելու նպատակով: Շարունակել ԵՄ/Սև ծով/Կասպից ծով տրանսպորտային ոլորտում համագործակցության ուղղությամբ «Բաքվի նախաձեռնության» շրջանակներում գործադրվող ջանքերը:

⁶⁶ Համագործակցել ավիացիոն անվտանգության ոլորտում և կիրառել Միացյալ ավիացիոն իշխանությունների (JAA) սահմանած կանոնները: Խորացնել ՀՀ կառավարության և ԵՄ-ի միջև համագործակցությունն ավիացիայի ոլորտում կարգավորման առնչվող հարցերի, ներառյալ շուկա մուտք գործելու հետ կապված հարցերի շուրջ:

ավտոճանապարհների հսկողությունը չի կատարվում ամբողջովին թափանցիկ մեխանիզմների համաձայն:

Երկաթուղային ոլորտում ընթացքի մեջ գտնվող օրենսդրական վերանայման նպատակն էլ երկաթուղիների ենթակառուցվածքի անվտանգության գնահատումը և երկաթուղիների ենթակառուցվածքի օգտագործման համար վճարների գանձումների կանխատեսումը:

Ավիացիայի ոլորտում 2007 թվականին վերանայված «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը հաստատել է Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության դերը՝ որպես պետական կարգավորող և Հայաստանում օդային տարածքի օգտագործումը և քաղաքացիական ավիացիայի գործողությունները վերահսկող մարմին: Օդային տրանսպորտի հատվածը ազատականացված չէ և գտնվում է հովանավորչության ներքո և ամբողջովին չի օգտագործում աճի իր ներուժը: Հայաստանը դիմել է Միացյալ ավիացիոն իշխանությունների (JAA) լիիրավ անդամակցության համար: Եվրոպական հանձնաժողովը և Հայաստանի իշխանություններն ավարտել են բանակցությունները օդային տրանսպորտի մասին հորիզոնական համաձայնագրի շուրջ:

2007 թվականին Հայաստանն ընդունել է **Էներգետիկայի**⁶⁷ նոր ռազմավարության վերաբերյալ փաստաթուղթ և գործողությունների ծրագիր, որը շեշտը դնում է բազմազանեցման միջոցով մատակարարման անվտանգության և միջուկային էներգիայի, ինչպես նաև էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման վրա: ԵՄ-ն շարունակում էր պահանջել մինչև 2016 թվականը Մեծամորի Ատոմակայանի⁶⁸ հնարավորինս արագ փակումը: Հայաստանը պատրաստ է փակել ատոմակայանը նախքան դրա նախատեսված աշխատանքային ժամկետի ավարտը՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրով ապահովված լինելու պայմանով: Հայաստանը նախատեսում է կառուցել նոր ատոմակայան և այդ նպատակով փոփոխություններ են կատարվել «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում՝ կայանի կառուցմանը մասնավոր հատվածի մասնակցությունը թույլ տալու համար: 2007 թվականի ընթացքում Հայաստանը շարունակել է բարձրացնել Մեծամորի ատոմակայանի անվտանգությունը և ընդլայնել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմնի⁶⁹ իրավասությունները: Այն նաև ընդունել է Մեծամորի ատոմակայանը շահագործումից հանելու ռազմավարություն և քննարկել

⁶⁷ Շարունակել բարելավել էներգետիկայի ոլորտը և արդիականացնել էներգետիկայի ոլորտի տեխնոլոգիաները, ինչպես նաև արագացնել էներգետիկայի ոլորտում բարեփոխումների իրականացումը՝ մասնավորապես լրամշակելով էներգաարդյունավետության մասին Հայաստանի ռազմավարությունը, ծառայությունների որակի բարձրացման և էլեկտրաէներգիայի արդյունավետ օգտագործման համար ներգրավելով ավելի շատ ներդրումներ, վերականգնելով (ընդլայնելով) գազի ատորգետնյա պահեստ-կայանքները, մեծացնելով էներգիայի զանազանեցումն այլընտրանքային էներգառեսուրսների միջոցով, ինչպիսիք են հիդրոէներգիան և ջերմաէներգիան:

⁶⁸ Շարունակել Մեծամորի ատոմակայանի վաղաժամկետ փակմանն ուղղված ջանքերը՝ մասնավորապես մշակելով և ընդունելով իրավական ակտեր ապամոնտաժման մասին, շարունակելով պարբերաբար գումարներ հատկացնել 2006 թվականի նոյեմբերին ստեղծված՝ ատոմակայանը շահագործումից դուրս բերելու հիմնադրամին և ավարտին հասցնել ապամոնտաժման ծրագիրը՝ Մեծամորի ատոմակայանի ապամոնտաժման համար անհրաժեշտ յուրաքանչյուր միջոցառման համար հստակ ժամանակացույցով և ճշգրիտ ծախսերի գնահատմամբ: Շարունակել Մեծամորի ԱԷԿ-ի շահագործման վայրում համագործակցությունը մինչև ատոմակայանի փակելը՝ վերջինիս շահագործման անվտանգությանը նպաստելու նպատակով: Հայաստանը և ԵՄ-ն պետք է շարունակեն երկխոսությունը հնարավոր ֆինանսավորման, ապամոնտաժման և Մեծամորի ատոմակայանի վաղաժամկետ փակման հետևանքների, ներառյալ բազմապիսի ծանրաբեռնվածության ռեժիմով աշխատող էներգաբլոկով փոխարինման շուրջ:

⁶⁹ Շարունակել աջակցել Հայաստանի ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմնին՝ վերջինիս անկախությունն ու տեխնիկական կարողություններն ամրապնդելու նպատակով:

Է օգտագործված վառելիքի համար չոր մթերման պահեստի^{70,71} կառուցումը: Հայաստանը ստեղծել է ատոմակայանը շահագործումից հանելու հիմնադրամ և սկսել է հատկացումներ ապահովել: Երկիրը սկսել է մշակել օգտագործված վառելիքի և ռադիոակտիվ նյութերի կառավարման ռազմավարություն: Հայաստանը նախատեսում է Ռուսաստանի Դաշնության հետ մշակել ուրանի հանքերը: Հայաստանն ուժեղացրել է ռադիոակտիվ նյութերի հսկողությունը՝ կիրարկելով համապատասխան օրենսդրությունը:

Երկիրը շարունակում է մասնակցել «Բաքվի նախաձեռնությանը»՝ ԵՄ–Սև ծով/Կասպից ծով էներգետիկ համագործակցությանը: Այս նախաձեռնության ներքո նախարարները համաձայնության են եկել շուկաների կոնվերգենցիայի, մատակարարման անվտանգության, էներգետիկայի կայուն զարգացման և տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ գործողությունների ծրագրի շուրջ:

Հայաստանը կառուցել է նոր ավանդական աղբյուրներից էներգաբլոկներ: Գազի ներմուծման գների մասին գործարքում «Գազպրոմ»-ն ավելացրել է իր բաժնեմասը «Հայռուսգազարդ» ընկերությունում: Հայաստանը գազի ոլորտում շարունակում է կիրառել լրահատկացումների համակարգ: Ռուսաստանի էներգետիկ միացյալ համակարգերը ձեռք են բերել Հայաստանի էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի լիարժեք վերահսկման իրավունքը: Այնուհետև, Հայաստանը համագործակցել է Իրանի և Վրաստանի հետ էներգահաղորդակցության բնագավառում: Այն շարունակել է նվազեցնել կորուստները էներգետիկ ցանցերում: Հայաստանն ու Իրանը հանդիսավոր կերպով բացեցին երկու երկրներն իրար կապող գազատարը: Հայաստանն ուսումնասիրում է նավթի գտման գործարան կառուցելու իրագործելիությունը, ինչպես նաև մի շարք միջոցառումներ է ձեռնարկել էներգիայի արդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում: Օրինակ՝ Հայաստանն ընդունել է «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգիայի» ազգային ծրագիրը և ստեղծել շրջանառու հիմնադրամ վերականգնվող էներգիայի աղբյուրների խթանման համար, ինչպես նաև հիմնադրել է փոքր հիդրոէլեկտրակայաններ: 2007 թվականին Հայաստանը նաև կառուցել է մի քանի փոքր հիդրոէլեկտրակայան, ինչպես նաև մեկնարկել է քամու ու երկրաթերմալ էներգիայի ոլորտում փորձնական ծրագիր:

Հիմնական **բնապահպանական** խնդիրները^{72,73} վերաբերում են կլիմայի փոփոխությանը, օդի որակին, ջրի որակին, թափոնների կառավարմանը,

⁷⁰ Ընդունել ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարություն:

⁷¹ Ձեռնարկել հետագա քայլեր էներգետիկայի ներքին շուկայի կանոններին համապատասխանելու համար և ամրապնդել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Շարունակել համագործակցությունն էներգետիկայի ոլորտում ԵՄ/Սև ծով/Կասպից ծով համագործակցության համար «Բաքվի նախաձեռնության» համատեքստում: Ձեռնարկել հետագա քայլեր էներգաարդյունավետությունը բարձրացնելու և էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործումը խթանելու, ներառյալ այդ ոլորտում Ազգային ծրագիր ընդունելու ուղղությամբ:

⁷² Շարունակել աշխատանքներն ազգային երկրորդ հաղորդակցության ուղղությամբ, ներառյալ ջերմոցային գազերի կադաստրի ստեղծումը և ադապտացիայի միջոցառումները՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրին համապատասխան, մշակել և գրանցել ՄԱԿ-ի մակարդակով մաքուր զարգացման մեխանիզմի (CDM) մի քանի ծրագրեր, ապահովել ակտիվ մասնակցություն «ԵՄ-ի ջրային նախաձեռնություն Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (EU WI EECCA) բաղադրիչով» նախատեսված հանդիպումներին, իրականացնել ազգային քաղաքականության երկխոսության ներքո նախատեսված միջոցառումները, սկսել գետի ավազանի կառավարման մոդելային ծրագրի մշակման աշխատանքները:

բնապահպանությանը և հողի օգտագործմանն առնչվող վտանգներին: Հայաստանն առաջընթաց է արձանագրել կլիմայի փոփոխության բնագավառում: Ազգային երկրորդ հաղորդակցությունը՝ ջերմոցային գազերի կադաստրի ստեղծման և ադապտացիայի միջոցառումները, մշակման փուլում են: Ընդհանուր առմամբ մշակվել է մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) 12 ծրագիր, որոնցից երեքն են ցայսօր գրանցվել ՄԱԿ–ի մակարդակով: Հայաստանը մասնակցում է ԵՄ Ջրային նախաձեռնության շրջանակներում ստանձնած գործունեությանը՝ ներառյալ ազգային քաղաքականության վերաբերյալ երկխոսությունը:

Բնապահպանության ոլորտում ազգային երկրորդ գործողությունների ծրագիրը⁷⁴ մշակման փուլում է: Քիմիական նյութերի և թափոնների ենթակառուցվածքի վերաբերյալ գոյություն ունեցող ազգային ռազմավարությունը կթարմացվի, իսկ հանքային ռեսուրսների օգտագործման ռազմավարությունը մշակման փուլում է: Գոյություն ունեցող ռազմավարական մոտեցումները և ծրագրերն իրականացնելու աշխատանքները շարունակվում են, սակայն դրանք պահանջում են շարունակական ուշադրություն: Նախատեսվում է ընդունել իրավական ակտ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Մի շարք բնագավառներում գործում է ոլորտային օրենսդրությունը, որը, սակայն, պահանջում է հետագա մշակում, մասնավորապես, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և օրենսդրության կիրարկման առումով: Վերջերս ընդունված օրենսդրությունը ներառում է հատուկ պահպանվող տարածքների, որսորդության և որսի տնտեսության, օգոնային շերտը քայքայող նյութերի, ջրի ազգային ծրագրի, բնապահպանության ոլորտում սակագների և կատալիզատորներով չզինված մեքենաների ներկրումն արգելելու կանոնակարգերի մասին օրենքներ, ինչպես նաև թափոնների վերաբերյալ կառավարության որոշումները: Մշակման փուլում են մի քանի նոր օրենք, որոնք վերաբերում են բնապահպանության պետական փորձաքննությանը, գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին և համապատասխանության մոնիտորինգին:

Չնայած շրջակա միջավայրի պահպանության գծով գործող վարչական կառույցների⁷⁵՝ այնուամենայնիվ առկա է երկրի բոլոր մակարդակներում վարչական կիրարկման կարողությունների ամրապնդման, ներառյալ՝ տարբեր մարմինների միջև համակարգման հիմնախնդիրը: Որոշ գործողություններ են իրականացվում՝ բնապահպանական հիմնախնդիրները քաղաքականության այլ ոլորտներում ներառելու համար: Մոնիտորինգը և օրենսդրության կիրարկումը հատուկ ուշադրություն են պահանջում: Հայաստանը շրջակա միջավայրի վիճակի մասին զեկույց չի հրապարակել 2003 թվականից ի վեր, բայց հասարակությանը

⁷³ Շարունակել Կիտոյի արձանագրության կիրարկման վերաբերյալ զեկույցման գործընթացը: Կիտոյի արձանագրության համատեքստում շարունակել նախաձեռնել քայլեր, որոնք անհրաժեշտ են Մաքուր զարգացման մեխանիզմի իրականացման ընթացակարգերն ընդունելու համար և մշակել մաքուր զարգացման ծրագրեր: Հայաստանը պետք է առաջարկի մեկ այլ ոլորտ 2007 թվականի ընթացքում ԵՀ-ի հետ բնապահպանական հարցերի շուրջ առավել հստակ համագործակցության շրջանակ հաստատելու համար:

⁷⁴ Ներկայացնել ազգային երկրորդ ծրագրի նախագիծը՝ ՀՀ կառավարության ընդունմանը:

⁷⁵ Ձեռնարկել հետագա քայլեր վարչական կարողություններն ու համակարգումն ամրապնդելու ուղղությամբ՝ վերապատրաստումների, անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացման, ուղեցույցների մշակման, միջնախարարական հանդիպումների միջոցով: Հնարավորինս ընդգրկել բնապահպանական հայեցակետերը նոր իրավական ակտերում (միջնախարարական հանդիպումների (օրինակ՝ Կայուն զարգացման ազգային խորհուրդը), ռազմավարությունների միջոցով):

տեղեկացնելու և ներգրավելու ուղղությամբ իրականացնում են որոշ աշխատանքներ: Օրինակ կոնվենցիան կիրարկելու ուղղությամբ ազգային գործողությունների ծրագիրը մշակման փուլում է. գործում է Օրինակի 9 կենտրոն: Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, ընթացակարգերը և հանրության հետ խորհրդակցությունը հատուկ ուշադրություն են պահանջում:

Հայաստանը վավերացրել է համապատասխան միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաները և արձանագրությունները՝ բացառությամբ «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին»՝ ՄԱԿ-ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի կոնվենցիայի «Եվրոպական ռազմավարական բնապահպանական գնահատման» արձանագրության: Հայաստանը չի ստորագրել նաև «Անդրսահմանային ջրատարների և միջազգային լճերի պաշտպանության ու օգտագործման մասին» ՄԱԿ-ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի կոնվենցիան: Եվրոպական հանձնաժողովը և Հայաստանը ընդլայնել են համագործակցության և տեղեկատվության փոխանակումը՝ ներառյալ կլիմայի փոփոխության, ջրի, կայուն զարգացման և լեռների պաշտպանության, Եվրասիայի տափաստանային հողերի ընդհանուր արդյունավետ օգտագործման, գործածությունից դուրս եկած պեստիցիդների, ինչպես նաև քիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման ուղղությամբ: Ջրային ռեսուրսների համալիր կառավարումը սահմանվել է որպես հնարավոր առավել սերտ համագործակցության առարկա: Հայաստանը (Վրաստանի, Ադրբեջանի և Եվրոպական հանձնաժողովի հետ միասին) Կովկասյան տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ՏԲԿ) համահիմնադիրներից է: Կովկասի ՏԲԿ-ն, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Թբիլիսիում, խթանում է կարողությունների զարգացումը և տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ հարևան երկրների միջև համագործակցությունը: Հայաստանը ստորագրել է ՏԲԿ-ի նոր կանոնադրությունը:

Տեղեկատվական հասարակության ոլորտում⁷⁶, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն, էլեկտրոնային հաղորդակցության կարգավորումը փոխանցվել է բազմաթիվ ոլորտներ կարգավորող անկախ մարմնի՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: 2007 թվականի ընթացքում Հայաստանը շարունակել է զարգացնել իր կարգավորման համակարգը և կատարելագործել կարգավորող մարմնի վարչական կարողությունները: Հայաստանի հեռահաղորդակցության ընկերության՝ («ԱրմենԹել»-ի) ֆիքսված հեռախոսակապի մենաշնորհը վերացվել է 2007 թվականի հոկտեմբերին: Չնայած IP հեռախոսակապի ութ լիցենզիայի տրամադրման, շուկաներում մրցակցությունը դեռ սահմանափակ է: Այդ պատճառով 2007 թվականին լիցենզիաներ տրամադրվեցին WIMAX անլար ծառայության և շարժական ինտերնետի համար, և ակնկալվում է, որ 2008 թվականին լիցենզիա կտրամադրվի շարժական հեռախոսակապի երրորդ օպերատորին: Բացի այդ, 2007 թվականին «ԱրմենԹել» և «Ղ-Տելեկոմ» ընկերություններին երրորդ սերնդի շարժական ծառայությունների լիցենզիա է տրամադրվել: «ԱրմենԹել»-ն այժմ 100%-ով ռուսական «Վիմպելկոմ» օպերատորի դուստր ձեռնարկությունն է: Ֆիքսված

⁷⁶ Շարունակել հարմարեցնել կարգավորիչ համակարգը և ձեռնարկել հետագա քայլեր կարգավորող մարմնի կարողությունների բարելավման ուղղությամբ:

հեռախոսակապի, շարժական հեռախոսակապի և ինտերնետ ծառայության ներթափանցման ծավալները մնում են համեմատաբար ցածր՝ 21%, 16% և 7% համապատասխանաբար:

Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացմանն աջակցող խորհուրդը դեռ բավարար միջոցներ չունի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նախաձեռնությունների իրականացմանը և համակարգմանն աջակցելու համար: Այս ոլորտում առկա է պետական միասնական քաղաքականության անհրաժեշտություն:

Տեսալսողական ոլորտում⁷⁷ Հայաստանի համար չափազանց դժվար է ապահովել այլ երկրներից եկող հեռուստահաղորդումների ընդունումն ու վերահեռարձակումը, քանի որ Հայաստանը չի վավերացրել «Անդրսահմանյան հեռուստատեսության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Հայաստանի կողմից ընդունված՝ տեսալսողական ոլորտի ազգային ծրագիրը սահմանում է ԵՄ օրենսդրությանը մոտարկելու համար անհրաժեշտ որոշ օրենսդրական պահանջներ:

Ինչ վերաբերում է **գիտահետազոտական և նորարարական**⁷⁸ գործունեությանը ցուցաբերվող աջակցությանը, Հայաստանի գիտահետազոտական կարողություններն ու ներդրումներն այդ ոլորտում դեռ բավականին համեստ են: Կարողություններ զարգացնելու, գիտական և տեխնոլոգիական (S&T) կառուցվածքների և կառավարման կատարելագործման ուղղությամբ ջանքերը ընթացքի մեջ են, հատկապես՝ **անցումը իսկապես մրցակցային ֆինանսավորման**, սակայն այստեղ դեռ շատ անելիքներ կան: Եվրոպական համայնքի ծրագրերում՝ Շրջանակային ծրագիր 6 (FP6), Ինտաս (Intas), Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC), մասնակցությունը արժեքավոր է եղել, բայց արդյունաբերության ներգրավվածությունը դեռ աննշան է: Հայաստանի համար անհրաժեշտ կլինի լիովին օգտվել ընթացիկ տարածաշրջանային համագործակցության ծրագրերից՝ Շրջանակային ծրագիր 7-ում (FP7) առավելագույնս ինտեգրվելու նպատակով:

7. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ⁷⁹ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն **կրթության**⁸⁰ ոլորտում բարեփոխումը շարունակվել է Բոլոնիայի գործընթացի սկզբունքների համաձայն՝ «Tempus» ծրագրի աջակցությամբ, որը հիմնական շարժիչ ուժն է եղել ուսումնական ծրագրերի արդիականացման և համալսարանների վարչական և կազմակերպական կառուցվածքների կատարելագործման գործում: «Tempus»-ը հայաստանյան համալսարանների հնարավորություն է ընձեռել ԵՄ համալսարանների հետ երկարատև

⁷⁷ Իրականացնել տեսալսողական քաղաքականության մասով ազգային ծրագիրը և ապահովել ոլորտի համապատասխանությունը ԵՄ օրենսդրությանը:

⁷⁸ Շարունակել ազգային գիտահետազոտական ոլորտի կարողությունների բարելավմանն ուղղված ջանքերը:

⁷⁹ Շարունակել բարեփոխումները կրթության, մասնագիտական վերապատրաստման, ինչպես նաև շարունակական (չափահասների) կրթության ոլորտներում՝ ձեռնարկելով հստակ քայլեր կրթությունը գործատուների կարիքներին առավել համապատասխանեցնելու և կրթության բարեփոխման ազգային ռազմավարությունն իրականացնելու ուղղությամբ՝ այդ թվում տրամադրելով բավարար ֆինանսական միջոցներ:

⁸⁰ Շարունակել աշխատանքները բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների աջակցման ուղղությամբ՝ Բոլոնյան գործընթացի սկզբունքներին համապատասխան՝ մասնավորապես որակի ապահովման և հավատարմագրման կառույցների ստեղծմամբ (ամրապնդմամբ):

համագործակցություն սկսել և ամրապնդել է ակադեմիական և ուսանողական շարժունակության ռազմավարությունը: Համալսարանները զարգացրել են ցանցային աշխատանք իրականացնելու կարողությունը՝ ուշադրությունը նորովի կենտրոնացնելով երիտասարդ ակադեմիական սերնդի վրա: Ուսանողների շարժը դեպի ԵՄ ընդլայնվել է «Erasmus Mundus» և «Erasmus Mundus External Cooperation Window» ծրագրերում⁸¹ մասնակցության միջոցով, որոնք ևս խթանել են ակադեմիական համագործակցությունը:

Հայաստանի կառավարությունը մշակել և բարելավել է **մասնագիտական վերապատրաստման** համար 2008-2010 թվականների գործողությունների ծրագիրը՝ արդյունավետությունը բարձրացնելու, կառավարումը և ֆինանսավորումը կատարելագործելու և կարողությունների վրա հիմնված չափորոշիչներ և որակի վերահսկման մեխանիզմներ ներմուծելու նպատակով:

ԵՄ-ն ցուցաբերել է շարունակական աջակցություն քաղաքականության սահմանման համար ինստիտուցիոնալ կարողություններն ամրապնդելու և աշխատաշուկայի պահանջները բավարարելու համար տեղական մակարդակով բարձրորակ վերապատրաստում ապահովելու նպատակով: Առաջընթաց է նկատվում նաև կրթության ազգային չափանիշների՝ որպես ավելի լայն տնտեսական զարգացման համատեքստում մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականության քննարկումները խթանող գործոնի մշակման գործում: Սակայն դեռ կան խոչընդոտներ արդյունավետ սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալացման, շարունակական (life-long) կրթական համակարգի ներմուծման և երիտասարդների համար համապատասխան վերապատրաստման ծրագրերի մշակման հարցերում: Հիմնական ուշադրության պետք է արժանանա մասնագիտական կրթության և վերապատրաստման օրենսդրական և ֆինանսական ոլորտային աջակցության կենսունակությունը, ինչպես նաև հանրային կրթության որակի ապահովումը:

Երիտասարդության⁸² ոլորտում 2006 թվականի համեմատությամբ Հայաստանում գրանցվել է «Երիտասարդությունը շարժման մեջ» (Youth in Action) ծրագրի համապատասխան գործողություններում մասնակցության աստիճանի ավելացում: Հայ երիտասարդները ներգրավված էին հակամարտությունների կառավարմանն առնչվող ընդգրկուն նախագծում, որը բաղկացած էր վերապատրաստման և երիտասարդների փոխանակության ծրագրերից և ներառում էր գործընկերներ Հարավային Կովկասի, ինչպես նաև ԵՄ անդամ պետություններից:

2007 թվականի փետրվարին Հայաստանը միացել է «**Մշակութային արտահայտման պահպանման և աջակցության մասին**» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիային, որի վավերացման գործընթացն ընթացքում է:

⁸¹ Ամրապնդել Հայաստանի և ԵՄ-ի միջև համագործակցությունը և փոխանակումները՝ նպաստելով Հայաստանի առավել լայն մասնակցությանը *TEMPUS, Erasmus Mundus, Erasmus Mundus External Cooperation Window, Marie Curie* ծրագրերին և Եվրոպական համայնքի 7-րդ շրջանակային ծրագրում:

⁸² Խթանել երիտասարդների միջև տարածաշրջանային համագործակցության գործունեությունը Կովկասում:

Հայաստանը հետևողականորեն իրականացնում է **առողջապահության ոլորտի բարեփոխումները**^{83,84}՝ ներառյալ անհետաձգելի բուժօգնության բարելավումը: Երկիրը մասնավորապես շարունակում է առողջապահության ապահովագրության համակարգի զարգացման և ոչ պաշտոնական վճարումների կրճատման միջոցով առողջապահության ֆինանսավորման կայունությանն ուղղված աշխատանքները: Շարունակվելու են բարեփոխումները բոլորի՝ ներառյալ խոցելի խմբերի համար հավասար, մատչելի և հասանելի բուժօգնության ապահովման ուղղությամբ: 2007 թվականին երկիրը մասնակցել է Առողջապահական տեղեկատվության և գիտելիքների հարցերով իրավասու մարմինների ԵՄ ցանցի աշխատանքներին: Այն նաև մասնակցել է Եվրոպական հանձնաժողովի, ԱՀԿ-ի և Եվրոպական առողջապահության դիտորդ կազմակերպության կողմից համատեղ կազմակերպված «Առողջապահությունը բոլոր քաղաքականություններում» սեմինարին, որի կապակցությամբ իր աջակցությունն է տրամադրել TAIEX ծրագիրը: Անհրաժեշտ է շարունակաբար ուշադրություն դարձնել վարակիչ հիվանդությունների՝ ներառյալ թոքախտի դեմ պայքարին:

⁸³ Շարունակել առողջապահության ոլորտում բարեփոխումների իրականացումը՝ առավել բարելավելով խոցելի խմբերի համար մատչելիությունն ու հասանելիությունը և մասնավորապես կարևորելով առողջապահությունը գյուղական վայրերում:

⁸⁴ Շարունակել բարեփոխումներն առողջապահության ոլորտում: Մասնակցել առողջապահական տեղեկատվության և գիտելիքների հարցերով իրավասու մարմինների ԵՄ ցանցի աշխատանքներին:

8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԹՎԵՐԸ

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ԵՀԳԳ) ուժի մեջ մտնելու հետ մեկտեղ ամրապնդվել է քաղաքականությանն ուղղված ԵՀ ռազմավարական օժանդակության բնույթը, և ԵՀ ֆինանսական հատկացումները ընդհանուր առմամբ ավելացել են: TWINNING և TAIEX համագործակցության գործիքների ներմուծումը ամրապնդել է ԵՀ-ի փորձագիտական խորհրդատվությանն ու կարգավորման ենթակա ոլորտներում տեխնիկական համագործակցությանն ուղղված աջակցության տրամադրման հնարավորությունը:

Հայաստանի կողմից ԵՀԲ Գործողությունների ծրագրի ընդունումից ի վեր ԵՀ աջակցությունը առավելապես ուղղված է Գործողությունների ծրագրում շարադրված քաղաքականության նպատակներին աջակցություն տրամադրելուն: 2007–2010 թվականների համար Ազգային ինդիկատիվ ծրագրի շրջանակներում Հայաստանին հատկացվել է 98,4 միլիոն եվրո: Ծրագրի միջոցով իրականացվում է երեք գերակայություն՝ աջակցություն ժողովրդավարական կառույցներին և արդյունավետ կառավարմանը (օրենքի գերակայություն, դատաիրավական բարեփոխումներ, պետական կառավարման բարեփոխումներ՝ ներառյալ պետական ֆինանսական միջոցների կառավարում, մարդու իրավունքներ, հիմնարար ազատություններ և քաղաքացիական հասարակություն), օրենսդրական բարեփոխումներ և վարչական կարողությունների զարգացում (օրենսդրության և չափորոշիչների մոտարկում, կարգավորման հայեցակետեր) և աղքատության նվազեցում (կրթություն, տարածքային զարգացում և սոցիալական ծառայություններ):

Հայաստանի ԵՀԳԳ տարեկան գործողությունների ծրագրի իրականացման համար տրամադրվել է 21 միլիոն եվրո: Եվրոպական հանձնաժողովի աջակցությունը կենտրոնացած է արդյունավետ կառավարման և ժողովրդավարական զարգացման, ԵՀԲ Գործողությունների ծրագրում ընդգրկված բնագավառներում կարգավորման բարեփոխումների և Հայաստանի Աղքատության հաղթահարման ռազմավարությանն օժանդակելու վրա:

Հայաստանը օգտվում է նաև ԵՀԳԳ բազմակողմ և տարածաշրջանային ծրագրերի միջոցով ֆինանսավորվող համագործակցության նախագծերից, ինչպես նաև համապատասխանում է ԵՀԳԳ Միջսահմանային համագործակցության բաղադրիչում ընդգրկվելու չափանիշներին: Աջակցություն է տրամադրվել միջուկային անվտանգության օժանդակության վերաբերյալ փաստաթղթի շրջանակներում՝ Մեծամորի ատոմակայանի միջուկային անվտանգության բարձրացման համար: